Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ

ԼՈՒՍԱՒԱՐ

19(342)
25.06.2013
Հրատարակվում է
1999թ. սեպտեմբերից

Лусарар ● ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԹԵՐԹ ● Lusarar

ԵՐՐՈՐԴ ՍԵՐՆԴԻ ՑԱՆՑՆ ԱՐԴԵՆ ԱՐՑԱԽՈՒՄ Է

ՇԱՐԺԱԿԱՆ ԻՆՏԵՐՆԵՏԸ ԳՈՐԾՈՒՄ Է

Հեռահաղորդակցության բնագավառում Արցախում հերթական առաջընթացն արձանագրվեց: Երրորդ սերնդի (3 G) ցանցի պաշտոնական մեկնարկը տրվեց հունիսի 22-ին: Այդ առթիվ ժամանել էին մեր հանրապետությունում տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման ու զարգացման առաջամարտիկ՝ «Ղարաբաղ Տելեկոմ» ընկերության հիմնադիր և խորհրդի նախագահ Պիեռ Ֆատուշը, ընկերության համասեփականատեր, նրա եղբայր Մուսա Ֆատուշը, որդին, ընկերության գլխավոր տնօրեն Ռալֆ Յիրիկյանը, գլխավոր տնօրենի տեղակալ Գարեգին Օդաբաշյանը: Պատվիրակությանն ընդունեց ԼՂՀ վարչապետ Արա Հարությունյանը:

Կառավարության ղեկավարը, ողջունելով հյուրերին, բարձր գնահատեց «Ղարաբաղ Տելեկոմ» ՓԲԸ-ի դերը, որը հնարավորություն է տվել Արցախը կապել արտաքին աշխարհի հետ: Շուտով ավարտին կհասցվի հանրապետության ամբողջ տարածքը բջջային ծածկույթով պատելն ու դրան զուգահեռ՝ ինտերնետ հասանելիության ապահովումը: Ա. Հարությունյանն իր գոհունակությունը հայտնեց նաև այն բանի կապակցությամբ, որ պարոն Ֆատուշն իր հետ ունեցած առանձնազրույցի ժամանակ պատրաստակամություն է հայտնել շարունակել աշխատել Արցախում, ընդ որում՝ ոչ միայն կապի բնագավառում: Վարչապետը միաժամանակ շնորհակալություն հայտնեց ընկերության գլխավոր տնօրեն Ռ. Յիրիկյանին՝ ժամանակակից մենեջմենթին համապատասխան աշխատաոճով ընկերություն ստեղծելու համար, որտեղ աշխատելը շատ արցախցիների ցանկությունն է: Ա. Հարությունյանը նշեց, որ «Ղարաբաղ Տելեկոմը» ոչ միայն մեր հանրապետության ամենախոշոր հարկատուներից ու գործատուներից մեկն է, այլև գումարային և աշխարհագրական առումով բարեգործական խոշոր ծրագրեր

իրականացնողը: Նա ափսոսանք հայտնեց, որ ժամանակի սղության պատճառով պարոն Ֆատուշն անձամբ չի կարող լինել կառուցված և ընթացքի մեջ գտնվող օբյեկտներում, բայց հույս հայտնեց, որ հաջորդ այցին, որը գործարարի խոստման համաձայն, կլինի առնվազն տարին մեկ անգամ, իր աչքով կտեսնի այդ աշխատանքների պտուղները:

Պ. Ֆատուշն իր և եղբոր անունից շնորհակալություն հայտնեց Արցախի իշխանություններին՝ իրենց ընդառաջելու համար: Նրա խոսքով՝ երբ իրենք եկել ու սկսել են այստեղ գործունեություն ծավալել, հաշվի են առել ոչ այնքան բիզնեսի շահութաբերությունը, որքան այն, որ Արցախը կապում են աշխարհի հետ: Այս միտքը պարոն Ֆատուշն արտահայտեց նաև հանդիպումից ու հանդիսավոր միջոցառումից հետո լրագրողներին տված ճեպազրույցում: Գործարարը պատրաստակամություն հայտնեց օժանդակել նոր աշխատատեղերի ստեղծմանը: «Դա թույլ կտա, որ Արցախի ժողովուրդը միշտ մնա իր հողի վրա, և այսպես իրենք ու մենք կզարգանանք, երկիրը կուժեղանա և կամաց-կամաց կմտնի զարգացած երկրների շարք»,- մասնավորապես ասաց նա:

Պաշտոնական հանդիպումից հետո տեղի ունեցավ շարժական ինտերնետի մուտքն ապահովող երրորդ սերնդի բջջային ցանցի շնորհանդեսը, որը կայացավ «Վալեքս Գարդեն» հյուրանոցում՝ պետական բարձրաստիճան հյուրերի, բիզնես ոլորտի ներկայացուցիչների մասնակցությամբ:

Ամեն ինչ ձևավորված էր «Ղարաբաղ Տելեկոմի» ապրանքանիշով, բայց ոչ նախկին գույներով: «Ղարաբաղ Տելեկոմը», կապված 3G-ի գործարկման հետ, փոխել է ապրանքանիշի տեսքը և գույները, այսուհետ կներկայանա մանուշակագույնի և սպիտակի համադրումով՝ կորպորատիվ նոր ոճով ու ձեռագրով: Միջոցառման տոնական տեսքին հանդիսավորություն էր տալիս ջութակահարների եռյակի նվագը: Եվս մի ատրիբուտ՝ քաղաքակիրթ ցուցադրության:

«Ղարաբաղ Տելեկոմի» գլխավոր տնօրենի տեղակալ Գ.Օդաբաշյանը ներկայացրեց միջոցառման առիթը՝ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում նոր առաջատար ծառայությունների մատուցումը, որը «Ղարաբաղ Տելեկոմ» ընկերության ավելի քան մեկ տասնամյա գործունեության արդյունքն է: Նրա խոսքով՝ ընկերության հիմնադիր Պ. Ֆատուշը մի շարք ուղղություններով ձեռնարկատիրական գործունեություն է ծավալում տարբեր երկրներում, բայց Արցախում նախընտրել է հեռահաղորդակցության ոլորտը, որը ոչ միայն կապ հաստատելու, այլ նաև ներդրումները խթանելու կարևոր պայման է:

Իր հերթին Պ. Ֆատուշն ասաց. «Մենք այստեղ չենք եկել փող աշխատելու նպատակով, այլ եկել ենք, որ կանգնենք երկրի կողքին, և կարծում եմ՝ «Ղարաբաղ Տելեկոմի» միջոցով կարողացանք Արցախն ավելի տեսանելի դարձնել աշխարհին: Մենք աշխատում ենք Ղարաբաղի դրոշի ներքո և նրա ժողովրդի համար: Կփորձենք այլ ներդրումներ բերել այստեղ և հնարավորություններ ստեղծել Արցախի տնտեսության զարգացման համար»:

Պ. Ֆատուշի գործունեությունն Արցախում չի սահմանափակվում միայն կապի ոլորտով, որտեղ ներդրումների ծավալը հատել է 50 մլն ԱՄՆ դոլարի սահմանը: Մեծ են նրա ծառայությունները նաև բարեգործական բնագավառում, հատկապես առողջապահության ոլորտում: Մասնավորապես, նրա կողմից այսօր ֆինանսավորվում է Կովսականի բժշկական համալիրը, Բերձոր քաղաքում կառուցվում է շրջանային նոր բուժմիավորում, ավարտված է Մարտակերտի շրջանային հիվանդանոցի շինարարությունը, շարունակվում են աշխատանքները Մարտակերտի պոլիկլինիկայում, ֆինանսավորում է իրականացվել Մարտունու, Հադրութի շրջանային հիվանդանոցների համար, բազմաթիվ առողջապահական ծրագրեր՝ Ստեփանակերտում և այլն: Ա. Հարությունյանի տեղեկացմամբ՝ պարոն Ֆատուշը պատրաստակամություն է հայտնել առաջիկա տարիներին նոր բարեգործական ծրագրեր իրականացնել, ինչը նշանակում է տարեկան 1 մլն դոլարի օգնություն Արցախի սոցիալ-տնտեսական զարգացման համար: Այդ մասին գործարարը նախորդ օրը Երևանում զրուցել է նաև ԼՂՀ Նախագահի հետ: Այն, որ Արցախը Ֆատուշների ընտանիքի համար հոգեհարազատ տարածք է, վկայում է նաև այն, որ նա հերթական անգամ Արցախ է գալիս իր հարազատների և ընկերների հետ: Ա. Հարությունյանի հավաստմամբ՝ հաճախ հանդիպելով նրա հետ Երևանում ու Լիբանանում, ինքը նրանից միշտ լսել է, որ Արցախը սիրում է իր հայրենիքի պես: Հաճելի է, իհարկե, ունենալ նման բարեկամ:

Բարձր գնահատելով նրա ներդրումը հեռահաղորդակցության բնագավառի զարգացման գործում, ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանը ստորագրել է հրամանագիր Պիեռ Ֆատուշին «Երախտագիտություն» մեդալով պարգևատրելու մասին: Պարգևը հանձնեց ԼՂՀ վարչապետը:

Ընկերության գլխավոր տնօրեն Ռալֆ Յիրիկյանը հայտարարեց երրորդ սերնդի ցանցի խորհրդանշական մեկնարկը, որը տրվեց փոքրիկ տեսահոլովակի ցուցադրումով: Նրա խոսքով՝ 3 G ցանցն իր հետ շատ նորություններ կբերի շուկա: Այսուհետ շարժական ինտերնետի շնորհիվ Արցախի բնակիչները կարող են հաղորդակցվել առանց տարածքային սահմանափակման, 3 G ցանցի միջոցով ավելի մեծ հնարավորություններ ունեն աշխարհի հետ կապ հաստատելու, ինչի շնորհիվ այստեղ կարող են զարգանալ և առաջարկվել բազմաթիվ նորարարական ծառայություններ:

Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԼՂՀ գնահատման և թեստավորման կենտրոնը ս. թ. հունիսի 24-ից սկսում է հանրակրթական, նախնական, միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների (անկախ կազմակերպական իրավական ձևից) 2012-2013 ուստարվա և նախորդ տարիների շրջանավարտների «Հայոց լեզու և հայ գրականություն», «Հայոց պատմություն», «Ընդհանուր պատմություն», «Մաթեմատիկա», «Անգլերեն», «Ֆրանսերեն», «Գերմաներեն», «Ռուսաց լեզու», «Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն», «Աշխարհագրություն», «Ստեղծագործական աշխատանք», «Նախնական զինվորական պատրաստություն» առարկաների միասնական, կենտրոնացված (2013թ. բուհերի ընդունելության) և պետական ավարտական քննությունների կազմակերպման գործընթացը:

Պետական ավարտական լրացուցիչ քննություններին կարող են մասնակցել՝

- հիմնական փուլում անցկացված քննություններին չմասնակցած շրջանավարտները,
- միասնական քննության ավարտական մասը (Ա մակարդակ) չհաղթահարած շրջանավարտները,
- պետական ավարտական քննություններից (2 առարկայից ոչ ավելի) անբավարար ստացած շրջանավարտները:

Այն շրջանավարտները, ովքեր չեն հայտագրվել պետական ավարտական քննություններին, իրենց դպրոցներում պետք է ներկայացնեն դիմում տնօրենի անունով: Պետական ավարտական քննություններից անբավարար ստացած կամ միասնական քննության ավարտական մասը (Ա մակարդակ) չհաղթահարած շրջանավարտները պետական ավարտական քննություններին (վերաքննություններին) մասնակցելու համար նոր դիմում չեն լրացնում:

Վերաքննություն հանձնողների տվյալները ներկայացնում են կրթության բաժինները:

Միասնական, կենտրոնացված (2013թ. բուհերի ընդունելության) լրացուցիչ քննություններին կարող են մասնակցել՝

- պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից 2013թ. զորացրվածները,
- սփյուռքի շրջանավարտները, նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների 2013թ. շրջանավարտները,
- 2012-2013 ուստարվա այն շրջանավարտները, որոնք միասնական քննությանը հարգելի պատճառով ի վիճակի չեն եղել մասնակցելու,
- այն շրջանավարտները, որոնք առաջին փուլի քննություններին մասնակցելու համար չեն հայտագրվել,
- բողոքարկման հանձնաժողովի կողմից միասնական լրացուցիչ քննությանը մասնակցելու թույլտվություն ստացած շրջանավարտները:

Միասնական, կենտրոնացված լրացուցիչ քննություններին մասնակցելու համար անհրաժեշտ է՝

- լրացնել դիմում-հայտ,
- «Արցախբանկ» ՓԲԸ-ում «Վերածնունդ» Գնահատման և թեստավորման կենտրոնի 22311008416500 հաշվի համարին յուրաքանչյուր քննությանը մասնակցելու համար փոխանցել 1500 (հազար հինգ հարյուր) դրամ և վճարի անդորրագիրը կցել դիմում-հայտին,
- անձը հաստատող փաստաթղթի պատճեն,
- 3 x 4 չափսի լուսանկար:

Միասնական քննությունների վճարից (1500 դրամ) ազատվում են.

- 1-ին ու 2-րդ խմբերի, ինչպես նաև հաշմանդամ երեխայի կարգավիճակ ունեցող անձինք,
- ՀՀ և ԼՂՀ պաշտպանության ժամանակ զոհված զինծառայողների երեխաները,
- առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող մինչև 23 տարեկան անձինք:

Վերոգրյալ խմբերին պատկանող անձինք դիմում-հայտին կցում են համապատասխան փաստաթղթերի պատճենները:

Դիմում-հայտերը լրացվում և ընդունվում են Գնահատման և թեստավորման կենտրոնում, ս. թ. հունիսի 24-ից՝ ամեն օր, ժամը 10:00 - 17:30:

Հասցեն՝ ք. Ստեփանակերտ, Մարտունի 97:

Ընդունման ժամկետն ավարտվում է ս.թ. հունիսի 29-ին, ժամը 18:00-ին:

Լրացուցիչ տեղեկությունների համար զան-գահարել (047) 97 40 51 հեռախոսահամարով:

Գնահատման և թեստավորման կենտրոն

ԱՆՑՈՒԴԱՐՁ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՄԻՁՈՑԱՌՈՒՄ, ՈՐ ՆԱԵՎ ՈՒՍԱՆԵԼԻ ԴԱՍ Է

Արցախի պետական համալսարանի հայ բանասիրության և լրագրության ֆակուլտետում անցյալ տարի ձևավորված գեղեցիկ ավանդույթը՝ շրջանավարտներին դիպլոմների հանձնման արարողությունը Արցախի առաջին դպրանոցում՝ Ամարասի վանքում հանձնելը, որն այս տարի անցկացվեց ՀՀ կրթության և գիտության նախարար Արմեն Աշոտյանի մասնակցությամբ, օրինակելի քայլ է դարձել նաև ուրիշ մասնագիտությունների շրջանավարտների համար: Հերթական նման միջոցառումը նախազորակոչային պատրաստության և ֆիզիկական դաստիարակության ֆակուլտետի շրջանավարտների համար էր, որն անցկացվեց մեկ այլ սրբավայրում՝ ԼՂՀ զոհված ազատամարտիկների հուշաթանգարանում: Պահը խորհրդանշական էր ոչ միայն իր բարոյական նշանակությամբ, այլև ֆիզիկական զգացողությամբ. շրջանավարտներից ոմանց հայրերը կամ հարազատներն իրենց կյանքն են դրել հայրենիքի պաշտպանության զոհասեղանին և հիմա նրանց լուռ հայացքների ներքո, նրանց անտես ներկայությամբ նրանց զավակները հավատարմության երդում են տալիս: Չորս տարի առաջ նրանք նման մի հանդիսավոր պահի՝ համալսարանի զոհված ուսանողների հուշաքանդակի առջև երդում էին տվել տիրապետել մասնագիտությանը, իրենց գիտելիքներով ծառայել հայրենիքին, շարունակել զոհված ազատամարտիկների կիսատ թողած գործը: Այսօր եկել է ժամանակը խոսքը գործով ապացուցելու: Այս միտքն ընդգծեց ԱրՊՀ ռեկտոր Ստեփան Դադայանը՝ շնորհավորելով և առաջինը դիպլոմներ հանձնելով մի խումբ շրջանավարտների:

ՁԱՀՄ նախագահ Գալյա Առստամյանը շնորհակալություն հայտնեց համալսարանի ղեկավարությանը՝ շրջանավարտների կյանքում հիշարժան իրադարձության՝ դիպլոմ ստանալու պատվավոր վայրերի շարքում ընդգրկելու նաև զոհվածների հուշաթանգարանը և իր մայրական օրհնությունը հղեց շրջանավարտներին՝ մաղթելով նրանց լուսավոր և խաղաղ ճանապարհ՝ ինքն էլ իր հերթին ավարտականներ հանձնելով:

Մասնագիտությամբ մանկավարժ, երկու հերոս նահատակ որդիների մայր Արփիկ Ալթունյանը, չկարողանալով թաքցնել հուզմունքը, արտահայտեց աշխարհի բոլոր մայրերի մաղթանքը՝ թող պատերազմ չլինի աշխարհի ոչ մի երկրում: Ու նաև՝ ուրախությունը, որ շարք է մտնում մատաղ սերնդի մեջ ռազմահայրենասիրություն սերմանող նոր սերունդ:

Ուսանողների հետ տարվող աշխատանքների գծով պրոռեկտոր Վիտալի Յարամիշյանն նշեց, որ գիտելիքները, որ ուսանողներն ստացել են համալսարանում և դասը, որ շրջանավարտները ստացան այստեղ, ուղենիշ կլինեն մասնագիտական հաջող գործունեության համար, իսկ մաղթանքը նույնական էր բոլորի համար՝ թող նրանց ջանքերը նպատակաուղղված լինեն միայն խաղաղ, ստեղծագործ աշխատանքի, և այլևս կարիք չլինի ստեղծելու հերոսների թանգարաններ, այլ՝ փառքի, աշխատանքի, հավերժության:

Շրջանավարտներին շնորհավորեցին և դիպլոմներ հանձնեցին նաև ամբիոնի վարիչ Սուսաննա Պողոսյանը, դեկան Շահեն Այդինյանը՝ յուրաքանչյուրն իր բարեմաղթանքը հղելով և միջոցառումը համարելով ևս մի հայրենասիրական դաս:

Դիպլոմների հետ միասին շրջանավարտներին թանգարանի կողմից հանձնվեցին Գոհար Մարտիկյանի հեղինակած՝ Լեոնիդ Ազգալդյանին նվիրված «Սա Հայաստան է և՝ վերջ» գիրքը:

Իրենց սրտի խոսքն ասացին նաև շրջանավարտները: Ու նաև անակնկալ մատուցվեց: Շրջանավարտներից Արեն Գաբրիելյանը և Վարդուհի Մինասյանը՝ երկուսն էլ զոհված ազատամարտիկների զավակներ, նոր են ընտանիք կազմել: Տիկին Գալյան արժեքավոր նվեր հանձնեց ամուսնական զույգին:

Դիպլոմների հանձնմանը զուգընթաց շրջանավարտներից մի քանիսը շնորհակալագրի արժանացան ռեկտորի կողմից՝ Հայաստանում կայացած ուսանողական համահայկական խաղերում մրցանակային տեղեր գրավելու համար:

Հիրավի, անվերջ են ուսուցման ու դաստիարակության հնարավորությունները, առանձնապես մի երկրում, որպիսին Արցախն է, որտեղ ամեն քայլափոխի հերոսացումի օրինակներ կան:

Սեփ. լրատվություն

ԱՆՅԱՆ ԿԻՍԱԵԶՐԱՓԱԿԻՉ ՓՈՒԼ

Մայիսի 18-ին Ստեփանակերտի Աշոտ Ղուլյանի անվան հ. 2 հիմնական դպրոցում աշխուժություն էր տիրում: Արդեն երկու ամիս էր, ինչ դպրոցի մանկավարժական ողջ կազմը, առավել ևս՝ աշխարհագրության ուսուցչուհի Լուսինե Արզանգուլյանը, պատմության ուսուցչուհի Ծովինար Առստամյանը, գրականության ուսուցչուհի Կարինե Իշխանյանը, երգ-երաժշտության ուսուցչուհի Էմմա Ամյանն իրենց ուժերն ու կորովը ներդրած, դպրոցի 7 աշակերտների նախապատրաստում էին «Հայ ասպետ» հեռուստախաղին: Եվ արդեն մոտեցել էր այդ բաղձալի օրը, երբ երեխաները պետք է ցույց տային ամիսների իրենց տքնաջան աշխատանքի արդյունքը: Ու քանի որ ինձ՝ որպես ծնողի, նույնպես բախտ էր վիճակվել մասնակցել այդ հիանալի խաղին, ուստի կփորձեմ իմ տպավորություններով հաղորդակցվել ընթերցողների հետ:

Մեր առաջին կանգառը Շուշիի սուրբ Ղազանչեցոց եկեղեցին էր, որտեղ երեխաները մոմ վառեցին ու լուռ աղոթեցին իրենց հաղթանակի համար. չնայած երազում էին առաջին հերթին ցույց տալ գրագետ ու բարձրամակարդակ խաղ, ինչը և նրանց հաջողվեց:

Խմբերը բաղկացած էին ինքնավստահ ու համարձակ պատանիներից ու աղջիկներից, ովքեր պայծառ դեմքերով, եռագույն թիկնոցներով պարուրված՝ հպարտորեն իրենց գիտելիքներն էին ցուցադրում հայրենի երկրի պատմության ու մշակույթի վերաբերյալ: Նախ նշենք, որ հեռուստատեսությամբ ցուցադրվող՝ առաջին հայացքից խիստ ու լարված մթնոլորտում ընթացող այդ խաղը բոլորովին էլ այդպիսին չէ, այլ շատ անմիջական ու հանգիստ է՝ շնորհիվ խաղի կազմակերպիչ, հաղորդավար Կարին Տոնոյանի բարձր ինտելեկտի ու մարդկային մեծ արժանիքների: Մեր թիմին բաժին էին ընկել արժանի մրցակիցներ՝ Երևանի հ. 58 և Գավառի հ. 2 դպրոցների թիմերը, ովքեր ևս լավ պատրաստված էին:

Առաջին փուլի ավարտին մեր թիմին բաժին ընկավ պար, ու երբ մեր աշակերտները պարեցին ժողովրդական ամենաբարդ պարերից մեկը՝ «Փափուրին», հանձնախումբն ապշած էր նրանց արհեստավարժ կատարումով, և գովեստի ու շնորհակալանքի խոսքեր հնչեցին թե՛ պարը բեմադրողի, թե՛ այդ երեխաների ծնողների և թե՝ դպրոցի մանկավարժական աշխատախմբի հասցեին: Գաղտնիք չէ, որ Արցախում այդքան էլ բարձր մակարդակի վրա չէ ազգային պարերի դրվածքը: Այդ առումով մենք անհանգստանալու տեղ ունեինք, սակայն շնորհիվ թիմի կազմակերպիչ Լուսինե Արզանգուլյանի պրպտումների, ամեն ինչ հրաշալի ավարտ ունեցավ. նա կարողացավ գտնել Գագիկ Գինոսյանի աշակերտներից մեկին՝ Շոթա Ղազարյանին, ով «Հայ ասպետի» մեդալակիր է, իսկ այսօր արդեն՝ ԼՂՀ պաշտպանության բանակի զինծառայող, ում ուսուցանելու շնորհիվ մեր աշակերտները կարողացան անթերի ներկայացնել պարը և վաստակել 10 միավոր: Առաջին անգամ 5 եթերաշրջանների ընթացքում ամենաբարձր 67 և 65 միավորները վաստակեցին ու կիսաեզրափակիչ փուլ անցան Գավառի և Ստեփանակերտի հ. 2 հիմնական դպրոցների թիմերը՝ արժանանալով Կարին Տոնոյանի դրվատանքի խոսքերին, ով և խոստացավ աշակերտներին՝ գերազանց խաղ ցուցադրելու համար նախ արշավ կազմակերպել դեպի Արցախ՝ ընդգրկելով նաև Արցախի խումբը, այնուհետև ևս մեկ արշավ՝ դեպի Հայաստանի տեսարժան վայրեր, որին կիրավիրվեն Արցախի և Գավառի հաղթող թիմերը: Այդ երկու օրերի տպավորությունները դեռ երկար կմնան մասնակիցներիս սրտերում: Մնում է միայն հաջողություն մաղթել մեր աշակերտներին՝ կիսաեզրափակիչում ևս հաղթող ճանաչվել՝ դրանով իսկ բարձր պահելու և՛ դպրոցի, ինչու չէ, նաև՝ Արցախի պատիվը, քանզի խաղը Հայաստանի հանրային հեռուստաալիքով դիտում են աշխարհի տարբեր ծագերում, երևի թե՝ նաև ուրախանում հայ պատանիների գիտելիքներով ու կրթության ասպարեզում ձեռք բերած հաջողություններով: Նշենք, որ «Հայ ասպետ» հեռուստամրցաշարը պատկանում է «Հայ ասպետ» կրթադաստիարակչական բարեգործական հիմնադրամին, որի գլխավոր հովանավորն է ՀՀ կրթության և գիտության նախարարությունը: «Հայ ասպետ»-ի նպատակն է՝ Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում և Արցախում ստեղծել մանկապատանեկան, երիտասարդական հայրենասիրական կազմակերպություններ, պատանիներին ու երիտասարդներին դաստիարակել համամարդկային և ազգային բարձր գաղափարներով, ասպետական բարեկրթությամբ և ոգով, արշավների և բանակումների միջոցով նպաստել նրանց հայրենաճանաչողության բարձրացմանը, համահայկական միջոցառումների և հեռուստահաղորդումների միջոցով՝ աշխարհի տարբեր ծայրերում ապրող հայ պատանիների և երիտասարդների համախմբմանն ու հայրենագիտական իմացության զարգացմանը:

Լիրա ՂԱԼԱՅԱՆ

ԸՆԹԱՑՔ

ՏԵՔՍՏԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Դպրոցական մաթեմատիկայում զգալի տեղ են զբաղեցնում, այսպես կոչված, տեքստային խնդիրները, որոնք բացի մաթեմատիկական տեսական (ֆորմալ) մտածելակերպի զարգացման խթանումից, կարևոր դերակատարում ունեն նաև այդ տեսական մտածելակերպը կիրառական խնդիրներ լուծելու միջոցով մաթեմատիկա գիտությունը առավել գրավիչ դարձնելու գործում:

Պայմանականորեն տեքստային խնդիրները կարելի է տրոհել 5 դասի՝

1. Աշխատանքի վերաբերյալ,
2. Շարժման վերաբերյալ,
3. Խառնուրդների (տոկոսների) վերաբերյալ,
4. Պրոգրեսիաների վերաբերյալ,
5. Թվերի նկատմամբ գործողությունների վերաբերյալ:

Չնայած տարբեր դասերի պատկանող խնդիրների լուծումների էական տարբերություններին, բոլոր դասերի խնդիրների լուծումները հանգում են մեկ ընդհանուր երևույթի՝ խնդրի ֆորմալ ներկայացման հասկացության վրա:

Խնդիրների լուծումները՝ որպես օրենք, հանգում են խնդրիներում տրված առնչությունների (հավասարումների) անհայտ մեծությունների արժեքները գտնելուն: Այդ խնդիրները կարելի է լուծել ինչպես մեկ անհայտով մեկ հավասարման, այնպես էլ մի քանի անհայտով հավասարումների համակարգի լուծումների օգնությամբ: Մենք կքննարկենք այդ լուծումները և կանենք համեմատություններ:

Եթե խնդրի լուծման հանար օգտվում ենք մեկ անհայտով մեկ հավասարումից, ապա փնտրվող մեծություններից մեկը նշանակելով ինչ-որ, ասենք, x տառով, մյուս փնտրվող մեծությունների արժեքներն արտահայտում ենք այդ x մեծության և խնդրում տրված պայմանների միջոցով, ընդ որում, այս դեպքում առաջանում են հետևյալ հարցերը՝

1. Խնդրի պայմաններում թվարկված հիմնական առնչություններից ո՞րն օգտագործել փնտրվող մեծությունների նշանակումների համար,
2. Փնտրվող մեծություններից ո՞րն ընդունել որպես գլխավոր փնտրվող մեծություն,
3. Ինչպե՞ս ներմուծված գլխավոր անհայտի և հայտնի մեծությունների թվային արժեքների օգնությամբ արտահայտել մյուս փնտրվող փոփոխականների արժեքները:

Այս հարցերը լուծելու համար սովորողներից շատ ջանք և ժամանակ է պահանջվում:

Իսկ եթե փորձ է արվում խնդիրը լուծել հավասարումների համակարգի օգնությամբ, ապա գլխավոր անհայտների հարց չի առաջանում. փնտրվող բոլոր փոփոխականներն ընդունվում են որպես գլխավոր անհայտներ:

Փորձենք վերլուծել հետևյալ խնդիրների լուծումները .

Խնդիր 1. Երկու բանվոր որոշակի աշխատանք միասին կարող են կատարել 4 օրում: Եթե առաջին բանվորը մենակ կատարի աշխատանքի կեսը, իսկ երկրորդը՝ մնացած կեսը, ապա աշխատանքը կավարտվի 9 օրում: Քանի՞ օրում բանվորներից յուրաքանչյուրը կկատարի այդ աշխատանքը միայնակ:

Խնդիր 2. Երկու զբոսաշրջիկ A և B վայրերից գնում են իրար ընդառաջ: Առաջինը A-ից դուրս է գալիս 6 ժամ ուշ, քան երկրորդը, և հանդիպման ժամանակ պարզվում է, որ առաջինը 12 կմ-ով պակաս ճանապարհ է անցել, քան երկրորդը: Շարունակելով ճանապարհը նույն արագությամբ, առաջին զբոսաշրջիկը B վայրն է հասնում 8 ժամում, իսկ երկրորդը՝ 9 ժամում: Պարզել A վայրից B վայրն ընկած հեռավորությունը և զբոսաշրջիկների արագությունները:

Մաթեմատիկայի դպրոցական դասընթացում տարածված են տեքստային խնդիրների հավասարման միջոցով լուծելու երկու եղանակներ.

I եղանակ

1. Նշանակել գլխավոր անհայտը.
2. Արտահայտել խնդրի բոլոր անհայտները գլխավոր անհայտի և խնդրում տրված պայմաններով.
3. Կազմել հավասարումը՝ օգտագործելով խնդրի մնացած պայմանները:

II եղանակ

1. Առանձնացնել խնդրի պայմաններով տրված հիմնական առնչությունները.
2. Նշանակել գլխավոր անհայտները.
3. Անհայտ մեծություններն արտահայտել գլխավոր անհայտներով և խնդրի պայմաններով.
4. Կազմել հավասարումը:

Փորձենք լուծել վերևում շարադրված խնդիրները նշված եղանակներով և համեմատել դրանք:

Խնդիր 1. I եղանակ. Փնտրվող մեծությունների թվային արժեքների նշանակումների համար ունենք «Երկու բանվոր որոշակի աշխատանք միասին կատարում են 4 օրում» առնչությունը: x-ով նշանակենք առաջին բանվորի ամբողջ աշխատանքը մենակ կատարելու դեպքում ծախսած օրերի թիվը: Այս դեպքում առաջին բանվորը 1 օրում կկատարի ամբողջ աշխատանքի $\frac{1}{x}$ մասը, իսկ երկրորդ բանվորը՝ $\frac{1}{4}-\frac{1}{x}$: Հետևաբար, երկրորդ բանվորը մենակ ամբողջ աշխատանքը կկատարի

$1:\left(\frac{1}{4}-\frac{1}{x}\right)=1:\frac{x-4}{4x}=\frac{4x}{x-4}$ օրում:

II եղանակ. Փնտրվող մեծությունների թվային արժեքների նշանակումների համար օգտվենք հետևյալ առնչությունից՝ «Եթե առաջին բանվորը կատարի աշխատանքի կեսը, իսկ երկրորդը՝ մնացած կեսը, ապա ամբողջ աշխատանքը կավարտվի 9 օրում»:

Թող x-ը առաջին բանվորի ամբողջ աշխատանքը կատարելու համար անհրաժեշտ օրերի թիվն է, այդ դեպքում նա աշխատանքի կեսը կկատարի $\frac{x}{2}$ օրում, իսկ երկրորդը՝ $\left(9-\frac{x}{2}\right)$ օրում, հետևաբար, երկրորդ բանվորն ամբողջ աշխատանքը կկատարի $(18-x)$ օրում:

Խնդիր 2. I եղանակ.

x-ով նշանակելով A և B վայրերի հեռավորությունը՝ հանդիպման կետի հեռավորությունը A կետից կլինի $\frac{x-12}{2}$ կմ, B-ից՝ $\frac{x+12}{2}$ կմ: Առաջին զբոսաշրջիկի արագությունը կլինի $\frac{x+12}{2}:8=\frac{x+12}{16}$ կմ/ժ, երկրորդինը՝ $\frac{x-12}{2}:9=\frac{x-12}{18}$ կմ/ժ:

II եղանակ. «Շարունակելով ընթացքը նույն արագությամբ, առաջին զբոսաշրջիկը B վայրն է հասնում 8 ժամում, իսկ երկրորդը՝ 9 ժամում» առնչությունից կստանանք, որ առաջին զբոսաշրջիկը A վայրից մինչև հանդիպում ճանապարհի վրա կծախսի $\frac{x-12}{2}:\frac{x+12}{16}$ ժամ, իսկ երկրորդը B-ից մինչ հանդիպում՝ $\frac{x+12}{2}:\frac{x-12}{18}$ ժամ:

Իսկ եթե խնդիրները լուծենք հավասարումների համակարգերի օգնությամբ, ապա գլխավոր անհայտների հարցը կլուծվի առանց որևէ դժվարության:

Նկատենք, որ հավասարումների համակարգով խնդիրների լուծումների համար որպես գլխավոր անհայտներ կարելի է ընդունել փնտրվող մեծությունները:

Մեկ հավասարման միջոցով խնդրի լուծման ուրվագիծը

Երկու (և ավել) փնտրվող մեծություններով խնդիրների մեկ անհայտով մեկ հավասարման օգնությամբ լուծման ժամանակ խնդրում տրված առնչություններն օգտագործվում են տարբեր նպատակներով. մեկը փնտրվող մեծության թվային արժեքն արտահայտելու, մյուսը՝ հավասարումը կազմելու համար:

Միևնույն ժամանակ մեկ գլխավոր անհայտի արտահայտության ներմուծման ժամանակ անհայտ մեծությունների թվային արժեքներ ստանում են բարդ տեսք: Այսպես, խնդիր 1-ում $\frac{2x}{x-4}$, $\frac{y}{2}$-ի փոխարեն, $\frac{4}{18-x}$, $\frac{4}{y}$-ի փոխարեն, խնդիր 2-ում՝ $\frac{x+12}{16}$, v_1-ի փոխարեն, և $\frac{x-12}{18}$, v_2-ի փոխարեն:

Խնդիրների վերլուծությունները ցույց են տալիս, որ մի քանի փնտրվող մեծություններով խնդիրներում (ինչպես 1 և 2 խնդիրներում)՝

1) համակարգերի կազմման միջոցով խնդիրների լուծումների գործընթացն ավելի հեշտ է, քան մեկ փոփոխականով հավասարումներ կազմելու եղանակը,

2) հավասարումների համակարգի կառուցվածքը շատ ավելի պարզ է, քան մեկ անհայտով հավասարման կառուցվածքը:

Խնդիր 1-ում հավասարումը կունենա $\frac{x}{2}+\frac{2x}{x-4}$ կամ $\frac{1}{x}+\frac{1}{18-x}=\frac{1}{4}$ տեսքը:

Իսկ այդ նույն խնդրի առնչություններից ստացված համակարգը կլինի՝

$$\begin{cases}\frac{1}{x}+\frac{1}{y}=\frac{1}{4}\\ \frac{x}{2}+\frac{y}{2}=9\end{cases}$$

Խնդիր 2-ում հավասարումը կլինի $\frac{x-12}{2}:\frac{x+12}{16}+6=\frac{x+12}{2}:\frac{x-12}{18}$, իսկ համակարգը՝

$$\begin{cases}\frac{9v_2}{v_1}+6=\frac{8v_1}{v_2}\\ 9v_2+12=8v_1\end{cases}$$

Այսպիսով, տեքստային խնդիրները մեծամասամբ հեշտ է լուծել համակարգ կազմելու միջոցով, բան մեկ անհայտով հավասարման օգնությամբ:

Ընդհանրացնելով վերը շարադրվածը՝ կունենանք.

I. Մի քանի անհայտներով տեքստային խնդիրները ցանկալի է լուծել հավասարումների համակարգերի օգնությամբ:

II. Մի քանի անհայտով տեքստային խնդիրները պետք է լուծվեն առանձնացնելով խնդրում տրված բոլոր առնչությունները և ենթարկվեն վերլուծության:

Վերջին գործընթացն իր հերթին կարելի է տրոհել հետևյալ փուլերի՝

1. Խնդրի պայմանների վերլուծություն (հիմնական նպատակը, հիմնական առնչությունների առանձնացումը, հիմնական առնչությունների մեջ մտնող անհայտ մեծությունների առանձնացումը, հիմնական առնչությունների սկզբնական փուլում տառերով գրությունը),
2. Փնտրվող մեծությունների նշանակումները,
3. Հավասարումների, համակարգերի կազմումը և լուծումը,
4. Խնդիրների ենթադրյալ պատասխանների հայտնաբերումը,
5. Ստուգումը,
6. Պատասխանների գրառումը:

Նշված փուլերի մի մասը ներկայացնենք խնդիր 2-ի լուծման գործընթացում.

1. Հիմնական առնչություններն են.

ա) առաջին զբոսաշրջիկը մինչ հանդիպումն անցել է 12 կմ պակաս ճանապարհ, քան երկրորդը,

բ) առաջին զբոսաշրջիկը մինչ հանդիպումը ծախսել է 6 ժամ պակաս, քան երկրորդը:

Պարզ է դառնում, որ պետք է արտահայտել՝

ա) առաջին զբոսաշրջիկի անցած ճանապարհը մինչ հանդիպումը,

բ) երկրորդ զբոսաշրջիկի անցած ճանապարհը մինչ հանդիպումը,

գ) առաջին զբոսաշրջիկի մինչ հանդիպումը ծախսած ժամանակը,

դ) երկրորդ զբոսաշրջիկի մինչ հանդիպումը ծախսած ժամանակը:

Վերհիշում ենք արագության, ժամանակի և անցած ճանապարհի հիմնական կապը՝ $s=v\cdot t$:

4. Լուծելով հավասարումների համակարգը, գտնում ենք՝

$v_1=6,\quad v_2=4$:

Հիշենք, որ v_1-ով և v_2-ով նշանակել ենք I և II զբոսաշրջիկների արագությունները կմ/ժ-ով, հետևաբար, եթե խնդիրը լուծում ունի, ապա պատասխանը կլինի միայն այսպիսին՝ առաջին զբոսաշրջիկի արագությունը 6 կմ/ժ է, երկրորդինը՝ 4 կմ/ժ, իսկ A-ից B հեռավորությունը՝ 84 կմ:

Վերջում նկատենք, որ տեքստային խնդրի լուծման տրամաբանական վերլուծությունը ցույց է տալիս, որ լուծելով հավասարումը կամ հավասարումների համակարգը, կազմված խնդրի պայմաններով, մենք գտնում ենք ոչ թե խնդրի լուծումը, այլ լոկ այն թիվը կամ թվազույգը, որոնց մեջ պետք է փնտրել խնդրի լուծումը: Հետևաբար, «ստուգումը» (ավելի ճիշտ է ասել՝ խնդրի լուծման առանձնացումը) հանդիսանում է խնդրի լուծման գործընթացի անհրաժեշտ տրամաբանական տարրը:

Ռ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ՀԱԱՀ Ստեփանակերտի մասնաճյուղի
մաթեմատիկայի ամբիոնի վարիչ
Գ. ԱՌԱՔԵԼՅԱՆ
ԱրՊՀ ասպիրանտ

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ

ՈՒՍՈՒՑԱՆՈՒՄ՝ ՆՈՐ ՄԵԹՈԴՆԵՐՈՎ

Մեթոդական այս ձեռնարկը՝ «Սովորենք սովորեցնել»՝ Լյուդմիլա Բեգլարյանի հեղինակությամբ, տպագրված ԼՂՀ կրթության և գիտության նախարարության պատվերով, «Դիզակ պլյուս» հրատարակչության կողմից, թեև հասցեագրված է հիմնականում դասվարներին, երիտասարդ ուսուցիչներին, կարող է օգտակար լինել նաև սկսնակի տարիքը վաղուց արդեն ետևում թողածներին, նույնիսկ՝ կայացածների շարքին դասվողներին: Ուսուցչուհու յուրօրինակ մեթոդներն ու մոտեցումները, ուսուցման նոր սկզբունքները խորհելու, մտորելու տեղիք են տալիս, ինչ-որ տեղ «ստիպում, պարտադրում» նորից ու նորից կարդալու այս կամ այն էջը, միտքը, խաղ-ուսուցում սկզբունքի կիրառությանը վերաբերող հատվածը, պարբերությունը: Ու դեռ ավելին. մեկ-մեկ այնքան ես տարվում, ոգևորվում, որ մտովի դասարան ես մտնում ու հիացմունքով լսում հմուտ ուսուցչուհու այնքա՜ն մատչելի բացատրությունները, վեց տարին նոր բոլորած սանիկների միտքը, ուղեղը շարժող հարցերը, խորհուրդները, հորդորները: Այո՛, զգացվում է, որ Լյուդմիլա Բեգլարյանը ասելիք ունի, ու որ շատ կարևոր է, եղածով, ձեռք բերածով չի բավարարվում, շատ է կարդում, կամենում ու կարողանում է դասագրքից, գրատախտակից հեռուն տեսնել: Դե, լավ ուսուցիչ դառնալու համար ուրիշ ի՞նչ է պետք:

Կենսագրությունը շատ սովորական է, անգամ՝ աղքատիկ:

Առաջին չորս տարիներին սովորել է ծննդավայրում՝ Մարտունու շրջանի Քարահունջ գյուղում, իսկ միջնակարգն ավարտել է Սոսում: 1979-ին ավարտել է Ստեփանակերտի պետական մանկավարժական ինստիտուտը: Սկզբում աշխատել է կոմերիտմիության քաղաքային բաժնում, հետո՝ միջդպրոցական ուսումնաարտադրական կոմբինատում: 1989-ի սեպտեմբերից աշխատում է Ստեփանակերտի Ե. Չարենցի անվան հ. 7 դպրոցում:

Ծանոթ մի ուղի, որ անցնում են շատերը: Բայց այս շատերից քչերն են հասնում հեռվում նշմարվող բարձունքին:

Ոմանք ինչ-որ կետում ընկրկում են դժվարությունների առջև, ոմանք կանգ են առնում անորոշ մի հատվածում ու այլևս իրենց ուժերին չեն վստահում և այլն: Լոկ մի մասն է մինչև վերջ համառորեն շարունակում, օր օրի գիտելիքներ ամբարում, ինքնակրթությամբ զբաղվում, ավելի լավին, ավելի կատարյալին հասնելու ուղիներ որոնում, հոգու խորքում հազար ու մի երազ գուրգուրում, փայփայում:

Այնպես, ինչպես Լ. Բեգլարյանը:

Այժմ պատմենք նրա ուսանելի փորձի ու բոլորովին վերջերս ընթերցողի սեղանին դրած գրքի արժանիքների մասին: Սկսենք պլան-սեղմագրից, յուրօրինակ այն անցաթղթից, որ իրավունք է տալիս բացելու դասարանի դուռը: Եվ այսպես, թերթենք գիրքը, բացենք 100-րդ էջը ու կարդանք.

3-րդ դաս. - Մաթեմատիկա

Դասի թեման - գումարման տեղափոխական հատկությունը.

Դասի նպատակը.

ա) Մեթոդական.

- Աշակերտների մեջ զարգացնել նոր թեմայի վրա աշխատելու կարողություններ.

բ) Ուսուցանող.

- Աշակերտների մեջ զարգացնել նոր թեմայի շուրջ ինքնուրույն դատողություններ անելու, մտածածը բանավոր շարադրելու, ընկերների և ուսուցչի հետ հաղորդակցվելու ունակություններ:

գ) Զարգացնող.

- Օրինակների միջոցով մարզել երեխաների հիշողությունը և ուշադրությունը:

դ) Դաստիարակիչ.

- Աշակերտների մեջ զարգացնել ուղիներ՝ ընկերոջ դատողությունները լսելու, դիմացինի առաջարկը հաշվի առնելու, առաջադրված խնդիրը ճիշտ լուծելու հմտություններ:

ե) Կշռադատող.

- Աշակերտների մեջ արմատավորել այն գաղափարը, որ գումարելիների տեղափոխությունից գումարը մնում է անփոփոխ:

Դասի ընթացքը.

ա) Խթանման փուլ

- Բանավոր հարցման միջոցով երեխաներին հիշեցնել, որ մի քանի գումարելիների գումարը հաշվելիս գումարումը կատարում ենք հերթականությամբ՝ ձախից աջ: Հանձնարարել աշակերտներին՝ մտածել, ինքնուրույն կազմել վարժություններ և լուծել այնպես, ինչպես լուծում էինք սովորաբար: Հետևել, որ մի քանի աշակերտներ այդ պահանջը կատարեն գրատախտակի վրա: Կատարել տալ հ. 140 վարժությունը, որը ծառայում է այդ նպատակին:

Հետո գալիս է «Իմաստի ընկալման փուլը» հետո՝ «Կշռադատման փուլը», հետո...

Ու այս ամենը՝ այնքան հանգամանորեն, որ անտարբեր մնալ չի կարելի: Ահա մի քանի տող, որ շատ բան է հուշում:

...Այնուհետև երեխաներին բաժանվում են թեմային վերաբերող վարժություններով քարտեր, և պահանջվում է մրցակցային եղանակով լուծել: Հաղթում են այն աշակերտները, ովքեր ավելի արագ և ճիշտ են լուծում:

Համաձայնեք, շատ քիչ ուսուցիչներ են այսպես վարվում, այսպիսի բարեխղճություն, իմացություն ցուցաբերում: Ու, կարծում եմ, չափազանցություն չի լինի, եթե ասենք՝ միայն այսպիսի պլան-սեղմագրով կարելի է որոշակի պատկերացում կազմել ուսուցչուհու մակարդակի, պատրաստականության մասին:

Նշենք, որ գիրքն իր ամբողջության մեջ սովորեցնող է, ուսուցանող: Տակավին առաջին դասարանում ուսուցչուհին պատշաճ կարևորություն է տալիս հասկանալով կարդալու կարողությունների զարգացմանը, վայելուչ ձեռագրերի ստեղծմանը, տարածության մեջ կողմնորոշվելու ունակությանը: Արդյո՞ւնքը: 27 աշակերտից ուսումնական տարվա ավարտին 12-ը տիրապետում էին ներկայացվող բոլոր պահանջներին, մնացած 15-ից զգալիորեն ետ էին մնում ընդամենը 5-ը: Ի դեպ, խաղերի միջոցով հնչյունների, վանկերի, թվանշանների ուսուցումը նրա մոտ այնքան սովորական է դարձել, որ երեխաները երբեմն հենց իրենք են կազմակերպում նման աշխույժ ու օգտակար «դասեր»:

Սաների մեջ բառակազմական կարողություններ մշակելու համար ուսուցչուհին բառերի մեջ մտնող տառերի կամ վանկերի փոփոխությամբ կազմել է տալիս նոր վանկեր: Օրինակ՝ վանկ-կտավ, հարս-սրահ, կամ պահանջում ստեղծել հանգավոր բառեր. գարուն-սիրուն, ամառ-համար և այլն: Ուշագրավ մի փաստ. 2-րդ դասարանում ուսուցչուհին պահում է «Հրաշք տետրեր», որոնք ձևավորվում են հետևյալ սկզբունքով. երեխաները դասի բովանդակությունը նկարում են, գրում հեղինակի անունազգանունը, բնագրի վերնագիրը: Նկարին հաջորդում են բնագրին վերաբերող առածասացվածքներ, հանելուկներ, շուտասելուկներ:

«10» գնահատված նրա աշակերտները (27-ից՝ 6-ը) ընթերցանության ժամանակ ընկալում են նոր կարդացած տեքստի բովանդակությունը. կարողանում պահպանել տրամաբանական դադարները, տեքստը բաժանել մասերի, վերնագրել, կազմել հարցաշար (հենակետային բառերով), ընթերցած տեքստից դուրս գրել հերոսներին բնութագրող արտահայտություններ և այլն:

«Դասավանդման նմանօրինակ ոճով աշխատելու շնորհիվ,- գրում է Լ. Բեգլարյանը,- ուսումնական երկրորդ տարվա առաջին կեսից մեր դասարանում արձանագրվեցին բավականին դրական արդյունքներ: Ամբողջ դասարանում միայն երկու աշակերտ էին ետ մնում պահանջվող չափորոշիչներից:

Գեղարվեստական նյութերի ընթերցման, լեզվական տարրական գիտելիքների և կարողությունների մշակման ճանապարհով ես իմ աշակերտների մեջ ձևավորել եմ հայեցի մտածողություն, ազգային հոգեկերտվածք, զարգացրել լեզվամտածողությունը, պատկերացումները շրջապատի, բնական երևույթների, մարդկանց ու նրանց աշխատանքային գործունեության մասին»:

Ի դեպ, ճանաչված դասվարի մոտ անցյալ տարի կազմակերպվել է բաց դաս-միջոցառում («Գիտունիկ աստղիկ»), որը ներկաների վրա թողել է շատ վառ տպավորություն:

Ուղղագրության ուսուցման բարձր մակարդակ ապահովելու համար, ինչպես գրքում է ներկայացված, ուսուցչուհին անհրաժեշտ աշխատանք է կատարում դեռևս առաջին դասարանում՝ զարգացնելով երեխաների հնչյունային սուր լսողությունը: Երկրորդում և երրորդում մեծ ուշադրություն է դարձնում բառային ինքնաթելադրությանը: Ընտրում է միևնույն կանոնին վերաբերող բառեր (1-ին դասարանում՝ 10, երկրորդում՝ 20-25, երրորդում՝ 30-40), որ աշակերտները պիտի գրեն ինքնաթելադրությամբ: Տալիս է նաև փոխադրություններ, շարադրություններ: Իհարկե, երկար ընդմիջումներով: Վերջիններս օգնում են, որ երեխաները փոքրիկ պատմվածքներ, հեքիաթներ հորինեն:

Թելադրությունները և արտահայտությունները տրվում են կոնկրետ առաջադրանքներով: Արդյունքը, որպես կանոն, միշտ գոհացուցիչ է լինում:

Բարձր են նաև մաթեմատիկայից տրված գրավորների արդյունքները:

Լյուդմիլա Բեգլարյանը, հիրավի, լավ ուսուցչուհի է... Նրա նմանները ուրախություն, հարստություն են դպրոցի, մեր պետության ու ժողովրդի համար: Ու ինչքա՜ն լավ է, որ նրանց թիվը հաշվվում է տասնյակներով, հարյուրներով: Ասել է թե՝ «վերևներում» տեղում չեն դոփում, ձևի համար չեն որոշումներ, օրենքներ ընդունում, անզեն աչքով էլ կարելի է տեսնել, որ ամենօրյա ուշադրության կենտրոնում է պահվում մեծ հույսեր ներշնչող կրթական մեծ բարեփոխումների ընթացքը, անձնվեր մանկավարժների գործն ու խոհեմ կեցվածքը: Առավել ևս՝ տարրական դպրոցում, քանզի այստեղ է դրվում գիտելիքների ամուր հիմքը:

- Տարրական մասը հիմքերի հիմքն է,- սովորաբար այսպես են որակում ուսուցիչները, երբ խոսք է բացվում միջին և բարձր դասարաններում տեղ գտած թերացումների կամ ձեռք բերված հաջողությունների մասին: Այո, փորձը, պրակտիկան համոզում են, որ տարրական դպրոցն ամենից առաջ պետք է սաներին սովորել սովորեցնի: Ժամանակին այս միտքը առաջ են քաշել ականավոր մանկավարժներ Յան Ամոս Կոմենսկին, Կ. Ուշինսկին, Ա. Դիստերվեգը: Դե, ուրեմն, ողջունենք, ի սրտե շնորհավորենք օրինակելի դասվար Լյուդմիլա Բեգլարյանին, որը ոչ միայն խորապես ընկալել, մարսել է դարերից եկած իմաստուն ասույթը, այլև իր կարծիքը, տեսակետը, մանկավարժական մոտեցումն ամփոփել է 128 էջանոց օգտակար այս գրքում: Սա, ինչ խոսք, գովելի քայլ է, անգամ՝ յուրատեսակ խիզախում: Ու ես ուզում եմ ասելիքն իմ ավարտել գրքին մի առանձին շուք տվող (պայծառ լուսանկարների հետ, անշուշտ) ասույթներից մեկով. «Միջակ ուսուցիչը շարադրում է, լավ ուսուցիչը՝ բացատրում, առաջավորը՝ ցուցադրում, մեծ ուսուցիչը՝ ոգևորում»: Սրանցից ո՞րն է Լյուդմիլան: Թողնում եմ մոտիկից ճանաչողներին:

Միքայել ԲԱԼՅԱՆ
20-րդ դարի Արցախի
լավագույն մանկավարժ

Շնորհավորանք

ՎԱՍՏԱԿԱՇԱՏ ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ՆՎԻՐՈՒՄՈՎ ԱՇԽԱՏԱՆՔԸ



Քիչ է ասել, թե Ժաննա Գրիգորյանը մաթեմատիկայի ուսուցչուհի է, փոխտնօրեն, կազմակերպիչ: Նրան լսողները, նրա հետ առնչվողները մի պահ կարծում են, թե նվիրումով ու ներքին այրումով աշխատող մանկավարժը, անաղարտ հայերենով ու ճոխ բառապաշարով շրջապատում բարձր տրամադրություն ապահովող կինը պոեզիայի սիրահար, հայոց լեզվի և գրականության ուսուցիչ է:

Կյանքում դժվար պահեր շատ է ունեցել. Արցախյան պատերազմն իր հարվածներն է տեղացել նրա գլխին: Բայց նա չի ընկրկել և իմաստնացած ուղի է անցել՝ մնալով բարձր ինտելեկտի, ազնիվ խառնվածքի, ընկերասիրության տեր մարդ: Նա միշտ ապրել է իր սաների ու, ինչու չէ, նաև նրանց ծնողների հետաքրքրություններով: Սա պիտի շեշտել, քանզի նրա համար չկա չար, չարաճճի, վատ աշակերտ, բոլորին վերաբերվում է մայրաբար՝ պահպանելով նրանց անձի արժանապատվությունը, ընկերական է նրանց նկատմամբ, բոլորին օգնում է իր բարի խորհուրդներով:

Ծնվել է 1953թ. հունիսի 24-ին, մանկավարժի ընտանիքում: Աշխատանքային հարուստ կենսագրություն ունի մանկավարժ Գրիգորյանը: Նա իր մանկավարժական մկրտությունը ստացել է 1972թ., Նորագյուղի միջնակարգ դպրոցում՝ աշխատելով որպես մաթեմատիկայի և ֆիզիկայի ուսուցիչ: 1973թ. հոկտեմբերից մինչև 1976թ. մայիսն աշխատել է Ստեփանակերտի Ա. Ղուլյանի անվան հ. 2 միջնակարգ դպրոցում՝ որպես ավագ ջոկատավար, իսկ 1976թ. տեղափոխվում է Ե. Չարենցի անվան հ. 7 միջնակարգ դպրոցը և շարունակում ավագ ջոկատավարի պարտականությունների կատարումը: 1978-1993թթ. աշխատել է նույն դպրոցում՝ որպես դասվար: 1993թ. ընտրվում է ԼՂՀ ժողկրթության, գիտության և մշակույթի արիմիության հանրապետական կոմիտեի քարտուղար, իսկ 1994թ. հոկտեմբերին՝ նույն կոմիտեի նախագահ, որտեղ աշխատել է մինչև 1996 թվականը: Այդ աշխատանքին զուգահեռ մաթեմատիկա է դասավանդել հ. 7 դպրոցում: 1996-ից առայսօր նույն դպրոցի փոխտնօրենն է:

Շուրջ 41 տարվա մանկավարժ է՝ բազմազան մեթոդների ու հնարքների տիրապետող: Նրան ոչ միայն հաջողվում է սովորեցնել թվերի լեզուն, այլև իր սաների առաջ բացում է կյանքի դժվարին ու ճշմարիտ փակագծերը:

«Մաթեմատիկան մտքի երաժշտություն է»,- սիրում է կրկնել ընկեր Գրիգորյանը: Ըստ նրա՝ պարտադիր չէ, որ բոլորը տիրապետեն մաթեմատիկային, բայց պարտադիր է, որ ունենան մաթեմատիկական մտածելակերպ՝ կյանքը ճիշտ ընկալելու, ազնիվ ապրելու, սխալներ չգործելու համար:

Փոխտնօրեն Գրիգորյանի աշխատանքը սահմաններ չի ճանաչում: Դպրոցի տեսչավորման արդյունքների մասին տեղեկանքում մենք ընթերցում ենք. «Թիվ 7 դպրոցում կազմակերպվող տարաբնույթ միջոցառումները՝ կրթական, մշակութային, մարզական, աչքի են ընկնում իրենց բարձր մակարդակով»:

Իրոք, դպրոցի փոխտնօրեն-կազմակերպիչը կարողանում է հայրենասերի վեհ կերպարով արժևորել և ապահովել տարվա ընթացքում նախատեսված բոլոր միջոցառումները, նաև թովիչ ձայնով, բարեհամբույր տեսքով, հուզումնաշատ ներաշխարհով ստիպում ըմբոշխնել այնպիսի պահեր, որ ծնում են հայրենասիրություն, ազգասիրություն, սեր ու հարգանք դեպի մշակույթը, դեպի հայ ժողովուրդը:

Հպարտանալու շատ բան ունի շնորհալի մանկավարժը: Նա ասմունքում է, երգում, պարում, ստեղծագործում: Սիրում է հումորը, կենսախինդ ու պարզապես լավ մարդ է, նվիրված ընկեր: Այսօր հպարտորեն հետադարձ հայացք ձգելով իր ապրած ու վաստակած տարիներին՝ ասում է. «Կյանքս նվիրել եմ մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության վեհ գործին»:

Վաստակաշատ մանկավարժ Ժ. Գրիգորյանի աշխատանքը բազմիցս արժանացել է դրվատանքի: Նա տարբեր հասարակական աշխատանքների և երկարամյա բարեխիղճ ու անբասիր մանկավարժական գործունեության համար պարգևատրվել է պատվոգրերով, շնորհակալագրերով, արժեքավոր նվերներով: Այսօր էլ նա շարունակում է աշխատել մեծ պատասխանատվությամբ, պատրաստ իր գիտելիքները, կարողություններն անմնացորդ հաղորդելու երիտասարդներին, իր սաներին:

Անչափ բարի է, ազնիվ, հոգատար, ուշադիր յուրաքանչյուրի հանդեպ, լավ խորհրդատու: Ունի երկու զավակ, որոնց համար անզուգական ու ինքնամոռաց մայր է, անսահման նվիրումով մեծացրել ու ճիշտ է դաստիարակել իր հրաշալի որդուն ու դստերը: Նա նաև նվիրված զավակ է իր ծնողի հանդեպ: Նրա խնամքին է մանկավարժ թոշակառու մայրը:

Սիրելի գործընկեր, հարգարժան փոխտնօրեն, ի խորոց սրտի շնորհավորում ենք Ձեր 60-ամյակը, ցանկանում ամուր առողջություն, հաջողություններ: Երջանիկ օրերդ թո՛ղ բազմապատկվեն, ու լուսավոր պահեր ուղեկցեն Ձեզ միշտ առինքնող արևի ճառագայթների ներքո:

Ստեփանակերտի Ե. Չարենցի անվան հ. 7
հիմնական դպրոցի մանկավարժական
կոլեկտիվ

ՓԱՍՏԱՐԿՈՒՄ

«ԿՈԼՑՈ» ՌԱԶՄԱԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՄՏՆՈՒՄ ԷՐ ԽՍՀՄ-Ը ԼՈՒԾԱՐԵԼՈՒ ԾՐԱԳՐԻ ՄԵՋ

Կարծում է ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ, «Քաղաքական հետազոտությունների ակադեմիա» ՀԿ նախագահ Ալեքսանդր ՄԱՆԱՍՅԱՆԸ

- Արդյո՞ք հնարավոր էր կանխել «Կոլցո» ռազմագործողությունը, այլ կերպ՝ հայկական գյուղերի տեղահանությունը, իրադարձությունների նման զարգացումն սպասելի՞ էին: Ամե՞ն ինչ արինք՝ դիմագրավելու դեպքերի նման ընթացքին, դրանց թափն ու ծավալն ինչ-որ չափով նվազեցնելու համար:

- «Կոլցո»-ն կամ «Օղակ»-ը սովորական գործողություն չի եղել: Այն մտնում էր ԽՍՀՄ-ը լուծարելու ծրագրի մեջ,- սա իմ կարծիքն է,- որի հեղինակներն Արևմուտքում էին, իսկ իրագործողները՝ Կրեմլում: Իրագործող թիմը գլխավորում էր Գորբաչովն ինքը: Այսօր Ռուսաստանում բազմաթիվ հետազոտողներ, վերլուծաբաններ զբաղված են գորբաչովյան գործի ուսումնասիրությամբ, և արդեն հնչում են ձայներ՝ հայրենիքի դավաճանության համար նրան դատի տալու: Իմ ուսումնասիրություններն ինձ նույնպես հանգեցրել են այն համոզման, որ Գորբաչովը վարում էր ԽՍՀՄ-ը լուծարելու քաղաքականություն, և այդ քաղաքականության լծակներից մեկը Արցախյան շարժումն էր: Ծրագրում չէր ներառվում ղարաբաղյան հարցի որևէ լուծում. Ղարաբաղյան շարժումը դիտվում էր իբրև պայթուցիկ նյութ, իբրև միջոց, վիթխարի տերության փլուզումն իրագործելու գործիք: 1988-ին մենք կարգին չգիտեինք էլ, թե ԽՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղարի մտքինն ինչ էր: Մեզ համար հրապարակայնությունը, վերակառուցումը լավագույն առիթ էին՝ մեր իղձերը հրապարակավ արտահայտելու, մեր պահանջատիրությանը հնչեղություն տալու: Արցախյան շարժումը ԽՍՀՄ առաջին նախագահ դարձած Գորբաչովի համար այլ նպատակ ուներ, մեզ համար՝ այլ: Չմոռանանք, որ Բաքուն էլ իր նպատակն ուներ: Բայց մենք փորձում էինք, այսպես կոչված, գլասնոստի, պերեստրոյկայի գաղափարախոսությունը քաղաքական պրակտիկայում օգտագործել՝ ղարաբաղյան հարցը լուծելու համար: Խորհրդային իշխանության վերջին տարվա գարնանը՝ ապրիլ-մայիսին, արդեն պարզ դարձավ, որ Արցախյան շարժումն այնպիսի թափ է առել, որ ոչ միայն արագացնում է ԽՍՀՄ լուծարումը, այլև հնարավոր է վճռի իր առջև դրված խնդիրը՝ վերամիավորումը Հայաստանին: Դրա առաջն անպայման պետք էր առնել: Մեծ ծրագիրը մշակողները և իրագործողները հասկացան, որ ղարաբաղցիներին պետք է զսպել, և այդ զսպաշապիկը նաև «Օղակ» գործողությունն էր՝ ղարաբաղցիներին պատժելու գործողությունը:

- Մեզ ցանկանում էին խեղդել: Եթե «Օղակ» է՝ խեղդել:

- Իհարկե, որպեսզի ԽՍՀՄ լուծարումը տեղի ունենա ըստ կանխապես մշակված ծրագրի: Այնպես որ, «Օղակ»-ի դերը ԽՍՀՄ փլուզման գործում դա է եղել: Եվ մենք հազիվ թե կարողանայինք որևէ բան ձեռնարկել 91-ին: Հազիվ թե, որովհետև ակներև էր, որ ղարաբաղցիները վճռականորեն են տրամադրված, և այդ վճռականությունը կոտրելու միակ միջոցը պետք է դառնար դաժան շրջափակումն ու «Օղակ»-ի շրջանակում ղարաբաղյան գյուղերի հայաթափումը:

- Ըստ Ձեզ՝ հնարավո՞ր չէր կանխել «Կոլցո»-ն: Բայց գոնե հետո ինչ-որ բան արի՞նք՝ քաղաքական մակարդակով, որպեսզի դադարեցվի ռազմագործողությունը: Գետաշենի դեպքերը պիտի որ մեզ հուշեին, որ ծանր օրեր են սպասվում:

- Գետաշենը նախերգանքն էր: Անկասկած, Գետաշենը «Կոլցո»-ի նախերգանքն էր: Այնտեղից էր սկսվել «Կոլցո»-ն ըստ էության: Այն ժամանակ մեր քաղաքական ղեկավարությունը, իհարկե, բողոքներ էր հրապարակում, դիմում էր Կրեմլին, դիմում էր Արևմուտքին: Եթե կային մեր ղեկավարների մեջ մարդիկ, որոնք գիտեին Մեծ ծրագրի մասին...

- Բայց կայի՞ն, արդյոք:

- Կարծում եմ՝ կային: Նրանք իրենց քայլերը պետք է չափեին-ձևեին այդ ծրագրին համապատասխան՝ դրան չդիմադրելու համար: Ըստ իս, Գետաշենի և Շահումյանի շրջանի առեղծվածային հանձնումը այդ ծրագրի իրականացման քայլերից է:

- Հայաստանյան իշխանավորների մեջ կային անձինք, ում ձեռնտո՞ւ էր կրավորական, հարմարվողական պահվածքը:

- Նրանք տեղյակ էին Մեծ ծրագրի մասին և գիտեին, որ այլ բան անել հնարավոր չէ: Գիտեին, որ ԽՍՀՄ-ը պետք է լուծարվի միութենական հանրապետությունների սահմաններում և այդ հանրապետությունների ներքին սահմաններում, մեր դեպքում՝ մարզի: Մինչև ԼՂՀ հռչակումը Շահումյանի շրջանը, դիմումի համաձայն, ներառված էր ԼՂԻՄ կազմում: Մեծ ծրագիրը ենթադրում էր, որ մարզը հենց իր կարգավիճակով պիտի մնա Ադրբեջանի սահմաններում: Դրա համար պետք է Շահումյանը տրվեր: Եվ տրվեց:

- Ղարաբաղը զոհել հանուն իշխանության, հանուն Հայաստանի անկախության...

- 91-ին արդեն այդ տեսակետը, որ Դուք ասացիք, թե ավելի լավ է մենք անկախություն ձեռք բերենք, քան թե Ղարաբաղի խնդրով խճողվենք, արդեն շրջանառվում էր: Ինձ անձամբ ասել են: Եվ եթե տեղափոխվենք ժամանակի մեջ ու գանք սեպտեմբեր, կտեսնենք, որ Լեռնային Ղարաբաղն ավելի շուտ է հռչակվել իբրև անկախ պետություն, քան Հայաստանում կկայանար անկախության հանրաքվեն: Ղարաբաղյան իշխանությունները, քաղաքական առաջնորդներն արդեն զգուշացված էին, որ Հայաստանն անկախանալու է Խորհրդային Հայաստանի սահմաններում, և պետք է իրենց գլխի ճարը տեսնեն: Ուրիշ ձև չգտան, քան անկախ պետություն հռչակելը: Մենք ոտքի էինք կանգնել միացման համար, երեք տարի անընդհատ «միացում» էինք գոչում և հանկարծ մեզ անկախ պետություն ենք հռչակում: Սա ևս իր բացատրությունն ստանում է քաղաքական ահա այդպիսի վարկածի համատեքստում:

- «Կոլցո»-ն սկսվեց: Դրան դիմագրավելու միասնական ծրագիր չմշակեցինք: Ամեն մի շրջան, ամեն մի գյուղ գործում էր, պայքարում էր առանձին:

- Մեր դեմ մի հսկայական կայսրություն էր: Հադրութի շրջանի գյուղերը կամ Բերդաձորն ի՞նչ կարող էին անել ահռելի բանակի դեմ:

- Ստեփանակերտը մի կողմ էր քաշվել, դիտորդի դերում էր:

- Վերհիշենք ԽՍՀՄ-ը լուծարելու Մեծ ծրագիրը և կտեսնենք, որ դա էլ է բացատրություն ստանում: Երբ ասում են՝ լռեք, սպասեք, շուտով Սովետը չի լինի... Գիտեին ղեկավարները վերևներում, Հայաստանի քաղաքական ղեկավարության մեջ կային անձինք, որոնք այդ մասին գիտեին: Գորբաչովի, այսպես ասած, ղարաբաղյան գործի ուսումնասիրությունն է ինձ այդ եզրակացությանը հանգեցրել:

- Տեղահանվելիք բնակավայրերն ինչպե՞ս էին որոշում: Ընտրում էին այն գյուղերը, որոնք Հայաստանի սահմանին մո՞տ էին կամ շրջափակված էին ազերաբնակ գյուղերո՞վ:

- Հարցին պատասխանեցիք փաստորեն: Այո, այդպես է եղել՝ խոցելի կետերը վերացնել և, որքան հնարավոր է, մինչև Խորհրդային Միության լուծարումը թուլացնել մարզը, որպեսզի հետագայում այն Ադրբեջանի համար գլխացավանք չդառնա: Դրա համար էլ առաջին հերթին խփում էին թույլ տեղերին, որպեսզի հետո Ստեփանակերտից տեղահանությունը դառնա կամավոր, և հայաթափվի ամբողջ Լեռնային Ղարաբաղը:

- Տեղահանություն սպասում էր ողջ Լեռնային Ղարաբաղին:

- Ադրբեջանը դա էր անում: Մարզը կարող էր պահվել, բայց արդեն...

- Առանց հայերի:

- Ինչպես Նախիջևանում:

- Տեղահանության ալիքը չանցավ Մարտունու, Մարտակերտի, Ասկերանի շրջաններով: Հերթը չհասավ նրանց, չհասցրին:

- Որովհետև վրա հասավ օգոստոսյան խռովությունը: Ադրբեջանը ձգտում էր, արդեն ասացի, հայաթափել ողջ Լեռնային Ղարաբաղը, չնայած ԽՍՀՄ-ի լուծարումից հետո մարզը, այնուամենայնիվ, պետք է պահպանվեր, քանի որ դա ձեռնտու էր բոլոր կողմերին, Արևմուտքին: Իսկ Ադրբեջանը շտապում էր հայաթափել և այնքան փոքրացնել հայերի ներկայությունը Լեռնային Ղարաբաղում, որ հետո գլուխը չցավի: Եթե խռովությունը հաջողվեր, դարձյալ Ղարաբաղի դեմ կկիրառեին կայսերական դաժան միջոցներ, որովհետև արդեն ակնհայտ էր, որ Խորհրդային Միության փլուզումն սկսվել էր Լեռնային Ղարաբաղից, Ղարաբաղյան շարժումն էր դրել գործընթացի սկիզբը, չնայած ղարաբաղցիները դրանում մեղք չունեն բնավ: Այդ գործը հաջողությամբ կատարում էր Գորբաչովը՝ մեզ խոստումներ տալով, որպեսզի Շարժման թափը չկոտրվի, բայց նաև ոչինչ չանելով, մեզ թողնելով Շարժման մեջ՝ Ղարաբաղը դարձնում էր ԽՍՀՄ-ը լուծարելու գործիք:

- Մինչև 1991-ի ապրիլն էլ գյուղերի բռնի տեղահանումներ են կատարվել: Կարելի՞ է ասել, որ դրանք «Կոլցո»-ին նախորդող փորձեր էին՝ ստուգելու համար, թե որքան արդյունավետ է այն լինելու:

- Դրանք ուղղակի Ղարաբաղը զսպելու, ենթարկեցնելու ծրագրի փուլեր էին՝ աստիճանաբար ծայրերից սկսել՝ Կամո, Ազատ, Գետաշեն ու ի վերջո թողնել հայաբնակ մեկերկու շրջան և ասել՝ ահա ձեր մարզը, որն արդեն անզոր կլիներ, որևէ ըմբոստ քայլ անելու ուժը չէր ունենա:

- Խոսքը միայն Կամոյի, Ազատի, Ղուշչի Արմավիրի մասին չէ: Մինչև 1991 թվականի ապրիլը Շուշիի շրջանի Տասը վերստը, Բերդաձորի գյուղերը արդեն մեկ անգամ բռնի տեղահանվել էին:

- Նույն ծրագրի իրագործման փուլերն են:

- Խորհրդային Միության օրոք «Կոլցո»-ի նման գործողություններ անցկացվե՞լ են:

- Խորհրդային Միության օրոք շատ բան է եղել, ստալինյան տարիներին հատկապես, ամբողջ ժողովուրդներ են տեղահանվել: Վերակառուցում, հրապարակայնություն, ժողովրդավարություն՝ ահա այդ ջերմացման, մեղմացման տարիների համար հայկական գյուղերի տեղահանությունը և բռնարարքները Ղարաբաղի բնակչության հանդեպ իսկապես աննախադեպ էին ողջ Խորհրդային Միության պատմության մեջ: Խորհրդային զորքը օրը ցերեկով մտնում էր հայկական գյուղերը և մարդկանց սպանում, բռնանում: Իսկ ազերի խուժանն զբաղվում էր թալանով: Բայց դա պետք է քննարկել Գորբաչովի ղարաբաղյան գործի համատեքստում: Ռուսաստան-Հայաստան, ռուս ժողովուրդ-հայ ժողովուրդ հարթությունում չպիտի քննարկվի հարցը: Մեղավորը, պատասխանատուն ինքը՝ Գորբաչովն է:

- «Կոլցո»-ն խափանվեց, ընդհատվեց պուտչի պատճառով: Մեր դիմադրությունը, միջազգային հանրության արձագանքը որևէ դեր չխաղա՞ց:

- Իրավիճակներ են լինում, երբ միջազգային հանրությունը կարող է բողոքել, բայց դրանից այն կողմ չգնալ: Սա այդ դեպքերից մեկն է եղել:

- Ունե՞նք տեղեկություններ, թե «Կոլցո»-ն ինչ ընթացք և ավարտ պիտի ունենար, եթե պուտչը չխանգարեր: Եթե օգոստոսյան խռովությունը հաջողվեր, էլի վատ էր լինելու:

- Անկասկած: Եթե խռովությունը հաջողությամբ ավարտվեր, Խորհրդային Միությունում վերականգնվելու էր բռնապետությունը, որ կար մինչև Գորբաչովը, բայց արդեն գազազած ձևով, և, ինչպես ասացի, մեղքը բարդելու էին Ղարաբաղի վրա: Այդ իմաստով այն, ինչ տեղի է ունեցել, մեր օգտին է եղել: Մեզ և՛ խռովությունն էր պետք, և՛ դրա ձախողումը:

- Նման դեպքում են ասում՝ չկա չարիք առանց բարիքի:

- Աստծո մատը խառն էր, Աստված մեր կողմն էր:

- Ինչո՞ւ հնարավոր եղավ «Կոլցո»-ն: Ասացիք, որ դա Արևմուտքին ձեռնտու էր: Իսկ Արցախի հարցում ՀՀ իշխանությունների ոչ ճիշտ քաղաքականությունը էակա՞ն դեր խաղաց: Ի՞նչ պատճառներ են դրդել Մոսկվային՝ սատարելու Բաքվին՝ այդ հրեշավոր ռազմագործողությունն իրականացնելու:

- Ասացի, որ հայաստանյան իշխանություններում կային մարդիկ, որոնք այդ բոլորը գիտեին: Եթե շատ լավ չգիտեին էլ, ապա նրանց այդ մասին ասում էին կիսով չափ, հիպոթեզի ձևով, հասկացնում էին, որ Ղարաբաղը Հայաստանին միանալ չի կարող, որ հետխորհրդային տարածքում նորանկախ պետություններ են հռչակվելու՝ միութենական հանրապետությունների սահմաններում: Ահա այս ամենը հասկանալի է դարձնում թե՛ հայաստանյան իշխանությունների, թե՛ Հայոց համազգային շարժման քաղաքական առաջնորդների, թե՛ Մոսկվայի, թե՛ նաև Ադրբեջանի վարքը:

- Հայաստանը չմասնակցեց ԽՍՀՄ-ը պահպանելու համար անցկացված հանրաքվեին, ՀՀ Գերագույն խորհրդի նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանն անթաքույց հակառուսական քաղաքականություն էր վարում: Այս հանգամանքները նշանակություն չունեցա՞ն:

- Իշխանության առաջին տարիներին նրա հակառուսական ուղղվածությունը, իհարկե, վիճարկելի է: Հայտարարություններ է արել, բայց երբ հասկացել է, որ Արևմուտքի հետ հույսեր կապել պետք չէ, և որ Ռուսաստանը կենսական շահեր ունի Հայաստանում, ինչը կարելի է օգտագործել, շրջվել է նաև դեպի Ռուսաստանը: Հայաստանյան ղեկավարության մտքում չի եղել, ենթադրենք, այնպիսի բան, ինչպիսին «Կոլցո»-ն էր, Ղարաբաղի բնակչության նկատմամբ բռնությունները: Ընդհակառակը, գլխավոր բանաձևը եղել է այն, որ ղարաբաղցիները շարունակեն ապրել իրենց դարավոր հողում: Ղարաբաղում հայերի անվտանգության պայմանն էր, որ Հայաստանի իշխանությունները դնում էին միջազգային հանրության առաջ: Այս ամենը տեղավորվում է այն հայեցակարգի մեջ, որի մասին սկզբից խոսել եմ՝ ԽՍՀՄ լուծարումը միութենական հանրապետությունների սահմաններում:

☞6

ՈՉ ՈՔ ՉԻ ՄՈՌԱՑՎԵԼ

ԱՆՄԱՀՈՒԹՅԱՆ ՀԱՄՓԱՆԵՐՈՎ՝ ՀԱՅՐԵՆԻՔԻՑ ՀԵՌՈՒ, ՀԱՅՐԵՆԻՔԻ ՀԱՄԱՐ

Սիրտդ ինչպե՞ս ազնիվ մնաց նենգ աշխարհում,
Նրանից է, որ դու ունես մաքուր արմատ,
Այդ արմատով պիտի ապրենք մենք աշխարհում:

Արամայիս Սահակյան

Շուշիի Արսեն Խաչատրյանի անվան 90-ամյա պետական հումանիտար քոլեջն իր գործունեության ընթացքում թողարկել է բազում շրջանավարտներ, որոնք կոլեկտիվի գալիքին պարզած այցեքարտն են, հպարտության առիավատչյան:

Շրջանավարտները կյանք են տարել ավանդույթներով հարուստ կրթօջախում ստացած գիտելիքներն ու հայրենասիրական դասերը: Նրանցից շատերը դարձել են լավագույն մանկավարժներ, գիտնականներ, քաղաքագետներ, հայրենիքի պաշտպաններ:

Տարիների հեռվից այսօր ցանկանում եմ ի խորոց սրտի երախտագիտությամբ ներկայացնել Շուշիի մանկավարժական ուսումնարանի 1940թ. գերազանցիկ շրջանավարտ Ալեքսանդր Արմենակի Ղուլյանի անթառամ կյանքի ուղին:

1922թ. սեպտեմբերի 25-ին արտակարգ եռուզեռ էր Ասկերանի շրջանի Դաշբուլաղ (այժմ՝ Աստղաշեն) գյուղի բնակիչ Արմենակ Ղուլյանի օջախում. ծնվել էր առաջնեկը՝ Ալեքսանդրը (Մանյայի և Էմմայի միակ եղբայրը):

Ալեքսանդրը սկզբնական կրթությունը ստացել է Աստղաշենի յոթնամյա, միջնակարգը՝ հարևան Բաղարայի դպրոցում՝ գերազանց առաջադիմությամբ: Այնուհետև ընդունվել է Շուշիի մանկավարժական ուսումնարանը, ավարտել գերազանցությամբ՝ ստանալով տարրական դասարանների ուսուցչի մասնագիտություն: Միաժամանակ ավարտում է Շուշիի ուսուցչական երկամյա ինստիտուտի ռուսաց լեզվի ուսուցիչների պատրաստման դասընթացները:

Ավարտական փաստաթղթերը ստորագրել է ուսումնարանի երկարամյա տնօրեն՝ երջանկահիշատակ Արսեն Խաչատրյանը:

Ուսումնարանն ավարտելուց հետո որպես ռուսաց և գերմաներեն լեզուների ուսուցիչ է աշխատել հայրենի գյուղում:

1941թ. մայիսին Ալեքսանդրը զորակոչվում է զինծառայության՝ սիրելի աշակերտների մոտ վերադառնալու, ամուսնանալու, երեխաներ ունենալու, ծնողներին թոռնիկներ պարգևելու պայմանով: Բայց չհասցրեց ավարտել զինծառայությունը: Սկսվեց Մեծ Հայրենականը, որի առաջին իսկ օրերից հայրենիքի պաշտպանության դիրքերում մարտնչում էին կրթօջախի շատ շրջանավարտներ:

Դպրոցական զանգի ղողանջները կիսատ մնացին, դասամատյանին ու գրչին փոխարինեց զենքը:

Մեծ Հայրենականում իր կյանքը գիտակցաբար հայրենիքից հեռու, հայրենիքի փրկության զոհասեղանին դրած, ուսումնարանի օրինակելի շրջանավարտ, Աստղաշենի դպրոցի ուսուցիչ Ա. Ղուլյանը հրե բոցերի մեջ «Գիտակցված մահն անմահություն է» երդումը

շուրթերին, մարտիրոսվեց 1943թ…

Պատերազմը կործանեց քաղաքներ և գյուղեր, ոչ միայն մարեց օջախների ծուխն ու արցունք խառնեց աղբյուրի կարկաչին, այլև խուժեց մարդկային ներաշխարհը, խլեց հազարավոր երիտասարդների կյանքը:

Շատերը ի՜նչ հույսեր, երազանքներ, նվիրումներ ու սխրանքներ թողին անավարտ...

Սրտի անհուն թրթիռով եմ թերթում Ալեքսանդրի՝ ծնողների միևնուճար որդու միակ հիշատակը՝ խունացած նամակների տրցակը, կապոցը, որոնք այսօր սրբությամբ ու խնամքով է պահում Աստղաշենում ապրող քույրը՝ Էմման:

Զինվորի՝ եռա-քառածավալ նամակներ, որոնք Ալեքսանդրը, հայրենի Արցախի ու հարազատների կարոտով տոգորված, հղել է գյուղ: Նամակների դեղնած թերթիկները դեռ այն հեռավոր օրերի ահեղ շնչով ու վառոդի ծխով են բուրում:

Հապշտապ, հապճեպ գրված, սեղմ, բայց անհունորեն անկեղծ, նվիրական նամակներ, որոնք ցողված են մարդկային վեհ զգացմունքներով, մեծ սիրով ու երազներով: Հաղթանակի լավատեսությամբ համեմված պատառիկներ են դրանք:

Բազմազան են Ալեքսանդրի նամակների աշխարհագրական հասցեները տարբեր ռազմաճակատներից՝ Վորոնեժի, Մոսկվայի, Սվերդլովսկի, Կրասնոյարսկի, Սարատովի, Խարկովի մարզեր, «Դաշտային փոստ»:

Բոլոր նամակներն այսպես էին սկսվում. «Թանկագին մամա, որդիական ջերմ բարևներս...»:

Հայրը՝ Արմենակը, ևս մարտադաշտում էր և հայրենի գյուղ վերադարձավ պատերազմից հետո՝ մահկանացուն կնքելով 1981-ին:

Նամակներից հառնում է Ալեքսանդրը՝ խիզախ, հպարտ ու գեղեցիկ՝ կյանքի հետ հավերժ քայլելու համար:

Ահա պարզ, անպաճույճ, բայց անսահմանորեն հուզիչ երկտող. «Մամա, պապա ջան, երբ կգամ, մանրամասն կպատմեմ: Ես երջանիկ եմ, որ մասնակցում եմ հիտլերյան բանակի ջախջախման գործին: Կգամ ու կպատմեմ մեր մարտիկների, ընկերների հերոսության մասին: Հիմա ժամանակ չկա»…

Իր մասին գրում էր հակիրճ, երկուերեք նախադասությամբ: Հետաքրքրվում էր բոլորով՝ բարեկամներով, հարազատներով, հարևաններով: Ամեն նամակում դիմում էր Մանյա և Էմմա քույրերին, որպեսզի լավ սովորեն և օգնեն մայրիկին: Ցանկությունն էր, որ Մանյան ստանա բարձրագույն կրթություն:

Իրականացավ եղբոր երազանքը: Մանյան գերազանցությամբ ավարտեց միջնակարգը և ստացավ բարձրագույն կրթություն: 1943-1949թթ. ուսուցչուհի էր Աստղաշենի յոթնամյա դպրոցում, 1949-1953թթ.՝ նույն դպրոցի փոխտնօրենը:

1953թ. սեպտեմբերից մինչև 1989թ. սեպտեմբերը Մանյա Ղուլյանն Ասկերանի միջնակարգ դպրոցի անփոփոխ տնօրենն էր՝ հասարակական-քաղաքական ակտիվ կենսագիրքով: Մեծ հարգանք էր վայելում իր անմնացորդ գործունեության համար:

…1942թ. դեկտեմբերին Ալեքսանդրը շտապում էր ուրախացնել ծնողներին՝ գրելով. «Հրամանատարությունը գնահատում է իմ ծառայությունները: Պարգևատրվել եմ մեդալով, ընդունվել կուսակցության շարքերը»:

Մի այլ նամակում գրել է. «Մենք կռիվ չենք ուզում, Գերմանիան է հարձակվել: Թույլ չենք տա, որ մեր երկիրն ավերի, սև ձեռքը մեկնի և ստրկացնի մեր խաղաղասեր ժողովրդին»:

«…Մասնակցեցի ճակատային գործողություններին և համոզվեցի, թե ինչ է իրենից ներկայացնում ֆաշիզմը»:

Ավա՜ղ… Իր մարտական հետագա ուղու մասին չհասցրեց պատմել:

1943թ. Ալեքսանդրի նամակը վերջինը եղավ…

Նամակին հաջորդեց «սև» թուղթը. «Ալեքսանդր Ղուլյանը հերոսաբար զոհվել է 1943թ.՝ Խարկովի մարզի Իզյումիի շրջանի Կամենկա գյուղի պաշտպանության ժամանակ: Նա թաղված է Կամենկա գյուղի եղբայրական գերեզմանոցի հուշահամալիրում»…

Ալեքսանդրն ընդամենը 21 տարեկան էր: Ամեն ինչ կիսատ մնաց: Նա իր կյանքը տվեց հանուն խաղաղ և լուսավոր ապագայի: Սակայն ապրում է ողջերի հիշողությունում, ապրում է այնքան, որքան հիշվում է: Ու կհիշվի մի՛շտ:

Որքան հեռանում են տարիները մեր մղած ահեղ պատերազմներից, այնքան ավելի է մեծանում Մեծ Հայրենականի և Արցախյան գոյամարտի անմահների խնկարկումը:

Նրանք չկան, բայց նրանց փառքը երբեք չի խամրում, նրանց թափած արյամբ այսօր ազատագրվել է հող հայրենին:

Հայրենական պատերազմում հաղթանակի 68, ԼՂՀ բանակի ստեղծման և Շուշիի ազատագրման 21-ամյակները թո՛ղ բազմաջահ կոթող լինեն հայ քաջորդիների վառ հիշատակին:

Երիցս փա՛ռք ու պատի՛վ հայ նահատակներին, ովքեր երդմնազանց չեղան՝ իրենց արյունը խառնելով հազարավորների արյանը, անձնուրացությամբ ու նվիրումով կռեցին Հաղթանակը՝ փրկելով հայրենիքը ոսոխների ճիրաններից:

Այս գեղեցիկ պահի, մեր խաղաղ օրերի համար մենք պարտական ենք նրանց:

Փա՜ռք մեր հաղթանակները կռողներին:

Խորին խոնարհում ավանդույթներով հարուստ Շուշիի Արսեն Խաչատրյանի անվան պետական հումանիտար քոլեջի 1940թ. գերազանց շրջանավարտ Ալեքսանդր Ղուլյանի հիշատակին:

Ալբերտ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ԼՂՀ վաստակավոր մանկավարժ

«ԿՈԼՅՈ» ՌԱԶՄԱԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՄՏՆՈՒՄ ԷՐ ԽՍՀՄ-Ը ԼՈՒԾԱՐԵԼՈՒ ԾՐԱԳՐԻ ՄԵՋ

5 ☜

- Ուրեմն չի՞ կարելի հետևություն անել, որ Մոսկվան «Կոլցո» գործողությամբ նաև ինչ-որ չափով պատժեց հայաստանյան իշխանություններին՝ հակառուսական տրամադրությունների համար:

- Հայաստանում հակառուսական տրամադրությունները հարմար առիթ էին Ղարաբաղին պատժելու համար, ինչը չէր հակասում Մեծ ծրագրին:

- Արդյո՞ք մենք այսօր ամեն ինչ գիտենք «Օղակ»-ի մասին: Տարբեր ենթադրություններ են արվում, տեսակետներ արտահայտվում: Բայց ձեռքի տակ ունե՞նք փաստեր, որոնք հաստատեին մեր ասածը: «Կոլցո»-ն համապարփակ ուսումնասիրության կարիք ունի: Ո՞վ պիտի անի այդ գործը: Ո՞վ պիտի տեղեկացնի աշխարհին, թե ինչ հանցագործություն է կատարվել Արցախի հայերի դեմ 1991 թվականի ապրիլ-օգոստոս ամիսներին:

- Քաղաքական այդպիսի բարդ գործողությունները, իրադարձությունները հաճախ փաստաթղթերում չեն արձանագրվում: Եթե փաստաթղթեր լինեն էլ, պետք է կարողանալ կարդալ, այսինքն՝ դեպքերի ընթացքի, խորքի հիման վրա որոշել, թե որքան են համապատասխանում առաջադրված վարկածին: Սա այդ կարգի հետազոտություն է պահանջում: Իսկ թե ով պետք է դա անի, կարծում եմ, շահագրգիռ երկու կողմ կա: Մեկը ռուսական այն հայրենասիրական ուժերն են, որոնք փորձում են բացահայտել Գորբաչովի՝ ԽՍՀՄ-ը լուծարելու իրական նպատակները: Բայց այդ ուժերին ավելի շուտ ոչ թե Ղարաբաղն է հետաքրքրում, այլ խորհրդային իմպերիայի կործանման պատճառը Գորբաչովի մեջ տեսնելը: Նման ուսումնասիրությունները չեն բացահայտում գորբաչովյան գործի ղարաբաղյան կողմը: Դա մենք կարող ենք անել միայն: Ղարաբաղյան իրադարձությունները, ամեն հրաման, Գերագույն խորհրդի ամեն մի որոշում այնքան լա՜վ են տեղավորվում իմ վարկածի մեջ...

- Արխիվների ուսումնասիրությունը ոչինչ չի՞ տա:

- Հազիվ թե այդպիսի բաները արխիվներում պահպանվեն: Բայց, կարծում եմ, փաստաթղթերից շատերը մեկնաբանվում են, ներքին կապ ունեն, ներքին տրամաբանություն կա դրանցում: Եվ դա կարելի է բացահայտել: Ուղղակի երևում է, ինչքան էլ թաքցնեն, երևում է: Բայց ո՞վ պետք է անի: Գնահատական տրվա՞ծ է «Կոլցո»-ին՝ ոչ: Ո՞վ պետք է այդ հարցը բարձրացնի: Հայկական կողմը անշուշտ և ղարաբաղյան կողմը՝ առաջին հերթին:

- «Կոլցո»-ն «ցեղասպանություն» հանցագործությանը բնորոշ ի՞նչ բաղադրիչներ ունի: Այդ գործողությանը մինչև այժմ իրավական գնահատական չի տրվել:

- Բոլոր բաղադրիչներն առկա են: Դա եղել է ցեղասպանություն՝ պետականորեն իրագործված, որովհետև պետական զորքն է մասնակցել:

- Ի՞նչ կերպ կարելի է հասնել նրան, որ ռազմագործողության թե՛ մտահղացողները, թե՛ կազմակերպիչները և թե՛ իրագործողները կանգնեն դատարանի առաջ: Հայկական կողմը որևէ աշխատանք կատարո՞ւմ է այս ուղղությամբ:

- Ոչ: Մի նրբություն կա: Ռուսաստանը մեր դաշնակիցն է, և նման ուսումնասիրությունները մի տեսակ ստվեր են նետում հայ-ռուսական հարաբերությունների վրա: Բայց դա պետք է կատարել, ես հենց սկզբից նշեցի, Գորբաչովի կերպարի, նրա՝ որպես քաղաքական գործչի, վարքի, հայացքների, նպատակների բացահայտման համատեքստում: Եթե այդպես անենք, չենք խաթարի հայ-ռուսական հարաբերությունները ու կգտնենք իսկական մեղավորներին:

- Այդպես էլ անենք, ո՞վ է խանգարում:

- Մենք ինքներս: Ցույլ ենք: Խոջալուի դեպքերի կեղծումը, ընդհանրապես մեր հակառակորդի կողմից պատմության ջանադրաբար կեղծումը ցույց տվեց, որ մենք դարեր շարունակ առաջնորդվում ենք այն մտայնությամբ, որ եթե մեր գործն արդար է ու ճշմարիտ, ապա ճշմարտությունն ինքնըստինքյան հաղթելու է: Ոչ մի ճշմարտություն չի հաղթում, եթե չի պաշտպանվում: Ճշմարտությունը կարող է պարտվել, եթե պաշտպանող չունենա:

- Հայ ժողովուրդը «Կոլցո» գործողության համար չի մեղադրում ռուս ժողովրդին: Այն ռուս ժողովուրդը չի կազմակերպել: Ինչո՞ւ պիտի ստվեր նետի հայ-ռուսական հարաբերությունների վրա:

- Երբ պետական քաղաքականության ստվերը կա դրա վրա, նման եզրակացություն հեշտ է անել: Դրա համար պետք է մեծ զգուշությամբ ուսումնասիրությունները կատարել, մեկ էլ եմ ասում, ոչ թե հայ-ռուսական հարաբերությունների համատեքստում, այլ՝ Գորբաչովի դատական գործի: Դատի պետք է տրվի Գորբաչովը՝ Սումգայիթի համար, Բաքվի համար, ադրբեջանահայության ցեղասպանության համար, «Օղակ» տխրահռչակ գործողության համար:

Զրույցը՝
Ծովինար ԳՐԻԳՈՐՅԱՆԻ

ԳՐԱԿԱՆ

Կոմիտաս ԴԱՆԻԵԼՅԱՆ

ԾԱՂԻԿՆԵՐ՝ ՀԱՄՇԵՆԻՑ

(պատմվածք)

Նվիրում եմ մեր անհայտ կորած ազատամարտիկներին, այդ թվում և իմ Նարեկ որդուն

(Սկիզբը՝ նախորդ համարում)



Ճորոխի կամրջին չհասած՝ Արդվին տանող խճուղուց կտրուկ թեքվելով աջ, բռնեցինք վերընթաց, դեպի լեռները ձգվող ճանապարհը: Շուրջբոլորը լավ խնամված, աչք շոյող պտղատու այգիներ էին՝ դեղնակարմիր զուգսեր հագած. ձիթենի, խնձորենի, թզենի, փշատենի, նշենի…

- Աշխարհի մասշտաբով պնդուկի բերքի երկու երրորդը Թուրքիային է բաժին ընկնում,- ասացի:

- Դիմացի սարը Խաչքար է կոչվում,- Նորայրը ձեռքն առաջ մեկնեց,- թուրքերը Քաչքար են ասում:

- Դու ոնց որ նախապես լավ ուսումնասիրել ես մեզ հետաքրքրող տեղանքը: Թուրքիային փնովում ես, տես՝ ինչ բարեկարգ ճանապարհներ ունի: Հզոր երկիր է դարձել:

- Ուրիշից խլած հողերի վրա:

- Չտային…

Չատ կոչվող գյուղը շրջանցելով, կրկին թեքվեցինք աջ, և քիչ անց մեր առջև արդեն ծանոթ քրքմագույն, ճաղապատ բաց դարպասն էր, որին ամրացված ժանգոտած ցուցանակին լատինատառ ինչ-որ գրություն կար (նախորդ անգամ չէի նկատել): Մեքենան ուղիղ քշեցի ներս և կանգնեցրի դարպասին հարող փոքր տան առաջ:

Թեթևակի մթնշաղ էր, բայց դեռևս պարզորոշ երևում էր ամեն ինչ: Ընդարձակ բակի խորքում, պահեստի սպիտակ շենքի առջև երկու տղամարդ փայտ էին սղոցում: Իսկույն ճանաչեցի: Լողլողը ձեռքը բարձրացնելով՝ նշանացի շարժեց, գլխի գցելով, որ հիմա կգան:

- Նայիր, նրանք են,- մատնացույց անելով, թեքվեցի, իջեցրի Նորայրի կողադռան ապակին:

- Ի՞նչ,- անհամբեր հարց՛եց:

- Անցյալ անգամ նրանց հետ եմ Խոփայից այստեղ եկել:

Նորայրը աչքերը կկոցած՝ ուշադիր նայեց ձեռքիս ուղղությամբ ու շարժեց շրթունքները, սակայն ոչ մի հնչյուն չկարողացավ արտաբերել: Երբ կարմիր վերնաշապիկով տղամարդը շրջվեց դեպի մեզ, նա ձեռքով բռնեց սիրտը, կարծես ցանկանալով մեղմացնել դրա խփոցները և գրպանից մի փոքրիկ սրվակ հանելով, ինչ-որ հաբ գցեց բերանը:

- Նվե՞րն է,- շշուկով հարցրի,- կարմիր շորովը:

Նա նայում էր մի տեսակ ցրված ու ասես չէր լսում: Վայրկենական մի սարսափ համակեց ինձ, կրկին վերհիշելով նրա ինֆարկտները: Նորայրը գունատ էր, այտերը ձգվել էին, դեմքը սրվել էր լարվածությունից: Այնուամենայնիվ, հարցս կրկնեցի՝ մեղմ հպվելով նրա ուսին: Նորայրը կմկմաց, թվաց՝ կորցրել էր խոսելու ունակությունը: Հաջորդ ակնթարթին, կարծես թե չհավատալով սեփական աչքերին, նա թեթևակի շարժեց գլուխը: Կոկորդս սեղմվեց, և բերկրանքի մի թույլ ճիչ դուրս թռավ իմ բերանից:

Նրանք արդեն մոտեցել էին:

- Լուռ նստած մնա և մի հուզվիր,- խրատական տոնով պատվիրեցի Նորայրին ու ցած իջնելով, ընդառաջ ելա:

Երկուսով հին ծանոթի պես հերթով սեղմեցին ձեռքս:

- Ուրախ եմ մեր բարեկամին նորից տեսնելով,- շողոմաբար ժպտաց լողլողը, ցուցադրելով դեղնած, նոսրացած ատամները,- ընկերո՞վ ես եկել:

- Հա,- ասացի,- քեռիս է՝ գնորդը, նրա համար ենք եկել:

- Իսկ ինչո՞ւ չի իջնում մեքենայից:

- Ճիշտն ասած՝ մի քիչ վատ է զգում իրեն: Դե, երկար ճանապարհ է, գիտեք:

Այդ պահին երկրորդ տղամարդը, որ Նվերը պիտի լիներ, հպանցիկ նայեց խցիկին և, Տե՜ր Աստված, տեսնեիք, թե ինչպես ակնթարթորեն փոխվեց նրա դեմքը… Դա բառերով անկարելի է արտահայտել:

- Հիմա կասեմ կիջնի,- հուզմունքս հազիվհազ զսպելով՝ մոտեցա, բաց արի դռնակը:- Հաստատ Նվերն է,- համոզված ասացի, սեղմելով Նորայրի ձեռքը: Նա վստահ գլխով արեց: Աչքերը ջրակալվել էին:

Ես փորձեցի սիրտ տալ նրան.

- Քեզ հավաքիր և հանգիստ իջիր մեքենայից, ուրիշ ոչ մի խոսք, չէ՞ որ օտար մարդ կա մեր կողքին:

Նորայրը մինչ կիջներ, դեռատի մի կին հայտնվեց՝ փոքրիկ աղջնակի ձեռքից բռնած: Նրանք ինչ-որ բան էին խոսում: Հետո այդ կինը մեր կողքով անցնելիս նախ նայեց Նորայրին, ապա՝ ինձ և նորից՝ Նորայրին, ու ձեռքն արագ բերանին տանելով, շտապ տուն բարձրացավ, հետևից ձգելով երեխային:

- Բարով եք եկել,- լողլողը հարգալից գլուխ տալով, ձեռքով բարևեց Նորայրին:

Նվերը՝ մեկուսի կանգնած, միայն կզակի թեթև շարժումով ողջունեց, առանց աչքերը բարձրացնելու:

Ես ցնցվեցի նրա անտարբեր վարմունքից՝ մի՞թե չճանաչեց: Նորայրն ապրի, իրեն պինդ պահեց: Հուզումը մեղմելու համար տան շուրջը բոլորած հսկա շագանակենիներին էր նայում անքթիթ:

Դառնալով մեր այցին, լողլողը գարծարար տեսք ընդունելով, ասաց, թե հիմա ուշ է, ինքը տուն է շտապում, և բեռնման գործը մնում է վաղվան: Այն մտքից, որ շուտով մենք մենակ կմնանք, ես ու Նորայրը սրտապնդող հայացքներ փոխանակեցինք:

- Իսկ դուք որտե՞ղ պիտի գիշերեք,- հանկարծ հարցրեց լողլողը:

- Գուցե՝ մեզ մոտ,- անվստահ պատասխանեց Նվերը:

- Ձեր տա՞նը,- նա զարմացած հոնքերը վեր ձգեց:

- Ես մեքենայում կքնեմ,- արագ վրա բերեցի,- իսկ քեռուս համար կվճարենք:

Լողլողը կարծես թե գոհ մնաց և բարի գիշեր մաղթելով, լայն-լայն քայլերով հեռացավ:

Արդեն սկսել էր նկատելի մթնել:

Նվերը առաջ ընկնելով, մեզ տուն հրավիրեց՝ օտարի պես:

Նորայրը ցածլիկ աստիճաններով հազիվ վեր բարձրացավ: Ոտքերն ասես չէին ենթարկվում իրեն, և նախքան ներս մտնելը մի առ ժամանակ կաշկանդված կանգնած մնաց դռան մոտ, չհամարձակվելով առաջ շարժվել: Նա թերևս հոգեկան խռովքի մեջ էր: Ես ձգեցի նրա թևը:

- Ինչո՞ւ եք կանգնել,- ներսից կանչեց Նվերը՝ հայերեն:

Նորայրը վերջապես սթափվեց: Ես նկատեցի, թե ինչպես մեկեն պայծառացավ դեմքը, ու նա զգուշորեն, նոր-նոր քայլող մանկան նման շարժվեց ձայնի ուղղությամբ:

Նվերը համրաքայլ ընդառաջ եկավ: Երբ ընդհուպ մոտեցան, Նորայրը՝ ձեռքերը լայն տարածած, կերկերուն, սրտակեղեք բացականչեց.

- Նվե՜ր, որդի՜ս…

- Հայրի՜կ,- հոգեցունց, տառապալից ձայնով արձագանքեց Նվերը և փաթաթվեց հորը…

Նրանց ուսերը շարունակ ցնցվում էին տենդորեն: Այդպես երկար մնացին կանգնած հայր ու որդի՝ իրար ամուր գրկած: Կա՞ ավելի ծանր, սրտամաշ բան, քան հասուն այրերի խուլ հեծկլտոցը: Նրանց նայելով, ես անկարող էի խեղդել արցունքներս:

Հետո Նորայրն ինչ-որ բան ասաց: Նվերը շրջվեց իմ կողմը և հետաքրքրությամբ նայեց աչքերիս: Իսկ և իսկ Նորայրն էր՝ ջահել ժամանակ. նույն լայն ճակատը, խոհուն, թախծոտ աչքերը, վայելուչ դիմագծերը:

- Քո Գոհար մորաքրոջ…

Մինչ Նորայրը կավարտեր ասելիքը, Նվերը վանկ առ վանկ տվեց անունս, ու մենք ջերմ կարոտով ողջագուրվեցինք:

- Այս երջանկությունը, Նվեր ջան, նա է մեզ պարգևել,- Նորայրը խաղաղված շունչ քաշեց, կողքի աթոռին նստելով:

Ես ու Նվերը նույնպես նստեցինք կողք կողքի: Բոլորս մի տեսակ շփոթահար, ինքնամփոփ վիճակում էինք:

- Մայրիկն ինչպե՞ս է, հայրիկ,- հարցրեց Նվերը՝ անզուսպ կարոտով:

- Լավ է, անհոգ մնա: Տանն ամեն ինչ կարգին է:

- Ներիր, որ անցյալ անգամ այդպես ստացվեց,- Նվերը մտերմիկ հարազատությամբ բռնեց ձեռքս:

Կից սենյակից, որի կիսաբաց դռնից գլուխը հանել, մեզ էր նայում քիչ առաջ բակում մեր տեսած փոքրիկ աղջիկը, հեկեկոցի ձայն լսվեց: Նվերը մոտ գնաց, աղջնակին ներս տանելով, դուռը փակեց հետևից:

- Նրան կաղալիս տեսնելով, սիրտս կտորկտոր է լինում,- հառաչեց Նորայրը:- Գլուխն էլ սպիտակել է:- Իրոք, Նվերի մազերը քունքերի մոտ սկսել էին ճերմակել:

Ոչ մեծ սենյակը, որտեղ մենք էինք, խղճուկ տեսք ուներ: Կրով սպիտակեցրած մերկ պատերն ու առաստաղը հիվանդասենյակի տպավորություն էին թողնում: Կենտրոնում մոմլաթե գունաթափ սփռոցով կլոր սեղանն էր՝ չորս խարխուլ աթոռներով, պատի երկարությամբ ինքնաշեն թախտ էր դրված՝ մաշված կարպետով ծածկած, կողքին՝ կապտաներկ պահարան: Միակ աչքի զարնողը թերևս դիմացի պատի՝ շրջանակի մեջ առնված նկարն էր, որից մեզ էր նայում միջին տարիքի անծանոթ մի տղամարդ՝ բաց գույնի աչքերի վստահ հայացքով: Ուզում էի հարցնել նրա ով լինելը, բայց չհամարձակվեցի:

Երկու-երեք րոպեից Նվերը վերադառնալով, մոտեցավ հորը և մեղավոր կիսաժպիտով ձեռքը նրա ուսովը գցեց.

- Իմացել է, որ դու ես… Ասում է՝ դեռևս բակում է դա զգացել, քեզ տեսնելուց:

- Իսկ ինչո՞ւ է լաց լինում:

- Ուրախությունից է լալիս, հայրիկ, բարեբախտություն է համարում, որ վերջապես մենք գտել ենք իրար,- Նվերի ձայնը բեկբեկաց:

- Նա գիտե՞, որ…

- Նա ամեն ինչ գիտե, հայրիկ, ամեն ինչ: Եվ խնդրում է թույլ տաս, որ գա ձեռքդ համբուրի:

Ես ու Նորայրը բնազդորեն նայեցինք միմյանց: Այդ չվրիպեց Նվերի աչքից:

- Դա հարգանքի, երախտիքի, նվիրվածության արտահայտություն է համարվում այստեղ,- հանգիստ բացատրեց նա, վերջին բառը շեշտելով:

- Լավ, թող այդպես լինի,- Նորայրը ոտքի կանգնեց:

- Պարտադիր չէ կանգնել,- ասաց Նվերը:

- Թող իմանա, որ ես էլ իրեն եմ հարգում,- առարկություն չվերցնող տոնով ասաց Նորայրը, ու երեքով աննկատ ժպտացինք:

Նվերի կանչով կինը ներս մտավ հուշիկ, կաշկանդված քայլքով: Նա հազիվ քսանհինգ տարեկան էր՝ սիրունատես, ուղիղ, հավասար մասի սանրված սևսաթ մազերով: Մի ակնթարթ կանգ առավ շփոթված, ապա մոտենալով, ծունր դրեց Նորայրի առաջ և նրա աջն առնելով, վեհերոտ համբուրեց: Կնոջ աչքերն իսկույն արցունքով լցվեցին:

Նորայրը, որ ուշի ուշով նրան էր նայում, փոքր-ինչ հակվելով, ասաց խորին զգացմունքով.

- Շնորհակալ եմ, աղջիկս:

Կինը՝ նրա ուշադրությունից զգացված, լուռ ժպտաց, ամոթխածությամբ մի կողմ նայելով: Ապա ափերով ծածկեց դեմքը և մրմնջաց աղերսագին.

- Հայրիկ, խնդրում, աղաչում եմ, Նվերին չխլեք մեզանից…,- նա դժվարությամբ արտասանեց այդ բառերը, հուզմունքից կմկմաց, և արցունքներն սկսեցին հոսել այտերն ի վար…

- Նրան թվում է, թե եկել եք ինձ տուն տանելու,- ցածր, խզված ձայնով արտաբերեց Նվերը:

«Ո՜ւր է թե նման հնարավորություն ունենայինք»,- անցավ իմ մտքով:

- Բալիկ ջան, մենք ձեզ իրարից բաժանելու նպատակով չենք եկել,- նրան հանգստացրեց Նորայրը:

- Կարողանում եք,- լացակումած շարունակեց կինը,- մեզ տարեք այստեղից,- և ուղղվելով ու խոնարհ գլուխ տալով, անշշուկ կողքի սենյակը մտավ:

Մի որոշ ժամանակ լուռ էինք:

- Անունն այդպես էլ չիմացանք,- լռությունը խզեց Նորայրը:

- Չե՞մ ասել,- Նվերը զարմացավ ու ինքնակշտամբանքով օրորեց գլուխը:- Ռեհան է անունը:

- Նա քեզ Նվե՞ր է ասում,- հարցրի ես:

- Այո, բայց միայն տանը,- անկեղծորեն պատասխանեց Նվերը,- ես այստեղ Նաթիգ եմ…

- Կարևորն այն է, որ դու կաս, Նվեր ջան,- քնքշանքով նկատեց Նորայրը:

- Ես հիմա որ կամ, այս աղջկան եմ պարտական,- նա ձեռքը մեկնեց դեպի հանդիպակաց դուռը:- Քանի՜ տարի է՝ սովորություն էր դարձել, անցնող օրերը մեկ առ մեկ ջնջում էի օրացույցին, երբ նկատեց, լաց ու կոծ արեց, ասաց՝ օրեր ես հաշվում, որ գնաս, հեռանաս: Խղճացի նրան և այլևս չէի ջնջում… Ինչո՞ւ չխոստովանել, պահեր են եղել, երբ կամեցել եմ գիշերով կտրել-անցնել դիմացի սարը, մի քանի ժամվա ճանապարհ է, մտածելով՝ ինչ լինում է, թող լինի, բայց միշտ զղջացել եմ. սրանց ո՞նց թողնեի անտեր, իրենց ո՞ր մեղքի համար… Հիմա ես նրանց մասին ավելի շատ եմ մտածում, քան՝ իմ,- Նվերը փաղաքշորեն շոյեց աղջնակի գլուխը, որ ոսկեծամիկ տիկնիկը պինդ գրկած՝ եկել նստել էր իր ծնկներին ու շարունակ անմեղ, խաղացկուն ժպիտով, աչքի տակով մերթ ինձ էր նայում, մերթ Նորայրին: Մոր նման թուխ ու խիտ մազեր ուներ, բայց դիմագծերը Նվերին ավելի մոտ էին: Ասում են՝ երեխաները մարդկանց ճանաչում են ինչ-որ ներքին հոտառությամբ: Տեսնել էր պետք, թե այդ փոքրիկ արարածը ինչպիսի ինքնամղումով ձգվեց դեպի Նորայրի՝ իրեն մեկնած ձեռքերը:

- Քանի՞ տարեկան ես,- նրան կրծքին սեղմելով, հարցրեց Նորայրը:

Աղջնակը, բութ մատիկը ծալելով, փափլիկ թաթիկը վեր պարզեց:

- Ի՞նչ է անունդ:

- Գոար,- հնչեղ թոթովեց նա:

- Մայրիկի անունն ենք դրել,- Նվերը հազաց ափի մեջ:

Այդ պահին ներս մտավ Ռեհանը և լռելյայն սպիտակ, մաքուր սփռոց գցեց սեղանին: Նկատեցի, որ նրա դեմքին մտահոգության հետք անգամ չկար:

Շարունակելի

ՎԵՐՋԻՆ ԷՋ

ՆՈՐԱՅՐ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ



2013 թվականի հունիսի 18-ին կյանքից հեռացավ բազմավաստակ մանկավարժ, հասարակական գործիչ Նորայր Հայրապետի Ավետիսյանը:

Նորայր Ավետիսյանը ծնվել է 1933 թվականի ապրիլի 5-ին, Մարտունու շրջանի Հաղորտի գյուղում: Ավարտելով հայրենի գյուղի միջնակարգ դպրոցը՝ 1951 թվականին ընդունվել և 1953 թվականին ավարտել է Ստեփանակերտի երկամյա ուսուցչական ինստիտուտի հայոց լեզվի և գրականության բաժինն ու աշխատանքի անցել Մարտունու շրջանային թերթի խմբագրությունում՝ որպես պատասխանատու քարտուղար: 1957 թվականի հունվարից նա աշխատանքի է անցել հայրենի գյուղի միջնակարգ դպրոցում: Աշխատանքին զուգահեռ՝ 1957-1962 թվականներին սովորել և ավարտել է Հայկական պետական մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետի հեռակա բաժինը:

Շուրջ կես դար բազմավաստակ մանկավարժն իր գիտակցական կյանքը նվիրել է հայրենի գյուղի դպրոցին՝ աշխատելով որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ, փոխտնօրեն, տնօրեն: Մանկավարժական աշխատանքին զուգահեռ՝ Նորայր Ավետիսյանը տասնամյակներ շարունակ կատարել է լրագրողական և գրողի ստեղծագործական աշխատանք՝ հրատարակելով ուսումնամեթոդական տասնյակ հոդվածներ և գեղարվեստական շուրջ մեկ տասնյակ գրքեր ու ժողովածուներ:

Անմիջական, պարզ ու շիտակ գյուղական միջավայրից Նորայր Ավետիսյանը ոտք դրեց իմացության ուղու վրա և հաստատուն քայլերով անցավ մանկավարժական գործունեության ու մտավորականի՝ միայն իրեն հատուկ անհատական կյանքի ճանապարհը: Եվ հովվերգական պարզությունն ու իր սիրելի մանկավարժական գործին նախանձախնդիր նվիրումը ուղեկից եղան նրան այդ ամբողջ ճանապարհին: Մինչև կյանքի վերջին օրերը նա շռայլորեն կիսեց մտավորականի ու մանկավարժի իր խոհերը, հայացքներն ու արժեքներն ընթերցող հասարակության և մատաղ սերնդի հետ, մինչև վերջին օրերը նա մնաց ուսուցանողի ու դաստիարակողի կերպարի մեջ՝ ցանկանալով ավելի շատ բան պահ տալ մատաղ սերնդին՝ ապագան լուսավոր ու ճիշտ կերտելու բնական շարունակության համար:

Իր անբասիր աշխատանքի համար նշանավոր մանկավարժն արժանացել է ավագ ուսուցչի և 20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժի պատվավոր կոչումներին, բազմաթիվ պատվոգրերի, վերջերս նաև՝ ԼՂՀ վարչապետի հուշամեդալին, որ պետք է հանդիսավոր պայմաններում նրան հանձնվեր մանկավարժ-գրողի 80-ամյա հոբելյանի հանդիսավոր միջոցառման ժամանակ, որը, սակայն, հանձնվեց հարազատներին՝ սգո արարողության ժամանակ:

Բազմաթիվ են Արցախի մեծ մանկավարժի ու մտավորականի ձեռքբերումները, և նա մեզանից իսկապես հեռացավ ապրած կյանքի ձեռքբերումներն արժևորող հանգիստ ինքնավստահությամբ:

Նորայր Ավետիսյանը միշտ բարձր է գնահատվել իր գործընկերների և աշակերտների կողմից: Նրա անունը վառ կմնա Արցախի ուսուցչության ու մտավորականության և բոլոր ճանաչողների սրտերում:ԼՂՀ կրթության և գիտության նախարարությունը իր վշտակցությունն է հայտնում Նորայր Ավետիսյանի ընտանիքի անդամներին ու հարազատներին:

Նրա կորստի ցավը ոչ միայն հարազատներինն ու ընտանիքինն է, այլև բոլորինս…

ԼՂՀ կրթության և գիտության նախարարություն

«Լուսարար» թերթի խմբագրության կոլեկտիվը խորապես վշտացած է ճանաչված մտավորական, թերթի ակտիվ թղթակից և հավատարիմ ընթերցող Նորայր Ավետիսյանի մահվան կապակցությամբ և իր զորակցությունն է հայտնում նրա ընտանիքին:

ԵՐԱՆԵԼԻ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ

(Հուշի պատառիկներ ուսանողական անցյալից)

1951-53 թվականներին ես ուսանող էի Ստեփանակերտի երկամյա ուսուցչական ինստիտուտի: Սկզբից խոստովանեմ, որ դրանք կյանքիս հետաքրքիր, քաղցր ժամանակներից էին, և ես երանությամբ եմ հիշում իմ ուսանող ընկեր-ընկերուհիներին, մեզ ավանդած դասախոսներին: Ինստիտուտում սովորում էին և Կիրովաբադից ու Շահումյանից, Շամախուց ու Գետաշենից, Ֆիզուլուց ու Գորիսից:

Գործում էին երեք ֆակուլտետներ՝ հայոց լեզվի ու գրականության, ռուսաց լեզվի ու գրականության և ֆիզիկամաթեմատիկական: Պարապմունքները տեղի էին ունենում նորակառույց այն շենքում, ուր հիմա գյուղատնտեսական քոլեջն է տեղավորված:

Մեր ֆակուլտետի դեկանն էր երջանկահիշատակ Կարո Ստեփանի Դավթյանը, որը միակ գիտական աստիճան ունեցողն էր, բանասիրական գիտությունների թեկնածու: Հազիվ էինք իրար ծանոթացել, փորձում էինք ճանաչել. Սերգեյ Գրիգորյանը՝ Մաճկալաշենից, Վաչագան Ավագյանը, Ալյոշա Իշխանյանը՝ Աշանից, Գյոզալ Մնացականյանը՝ Առաջածորից, Նատաշա Առուշանյանը՝ Չլդրանից, Ռուբեն Պետրոսյանը՝ Մարտակերտից, Տարոն Ավետիսյանը, Գառնիկ Ստեփանյանը, Դոմիկ Մելքումյանը՝ Գորիսի Տեղ գյուղից, երբ մեկ օր լսարան մտավ Կարո Դավթյանը և ասաց.

- Ոչ բարի լուր. Ադրբեջանը բրդամթերման պլանը չի կատարել: Օգնել է պետք: Երեք օրով գնացեք տուն, չորսական կիլոգրամ բուրդ բերեք: Թերացողները կզրկվեն ուսանող լինելու իրավունքից...

Ես տուն եկա: Մեր բակում ոչխար չկար, այծեր էին, ձին ու գոմշակովը: Մայրս դատարկեց յուր ներքնակը, բուրդը լցրեց պարկը, դրեց ձեռս ու այդ օրվանից սկսեց քնել տախտակամած հատակին: Պատերազմում զույգ զավակներ կորցրած մայրս, 13 զավակներ ծնած ու սնած մայրս... Որ ուսումնատենչ որդին 4 կգ բրդի համար չզրկվի ուսանող լինելուց: Որ Ադրբեջանը պարզերես դուրս գա Կրեմլի առաջ և հաղթող ճանաչվի սոցմրցությունում: Ուսումը բարձր հիմքերի վրա էր դրված: Թող զարմանալի չթվա, որ գիտելիք չունեցողը այնտեղ դրական գնահատական ստանալ չէր կարող: Դասախոսներ Արամ Մարտիրոսյանը, Կարո Դավթյանը, Սարգիս Աբրահամյանը, Լևոն Բաղդասարյանը, Տատյանա Ալեքսանդրովնան, Լուսաբեր Օգանեսովնան, Արմենակ Ղազարյանը, Սարգիս Սարգսյանը, Սարգիս Արամյանը իրենց գործի նվիրյալներն էին և օգտվում էին բարձր հեղինակությունից:

1951թ.աշնանային մեկ օր Նիկոլայ Աբրահամյանը գրական ֆակուլտետի ուսանողներիս տարավ գրողների միություն. Բագրատ Ուլուբաբյանի հաշվետվությունն էր: Բաքվից եկել էր Մարգար Դավթյանը, որի «Լուսավոր ուղի» գիրքը նոր էինք քննարկել գրական խմբակում (խմբակի ղեկավարը տողերիս հեղինակն էր):

Հաջորդ տարում հանդիպում էր մարզում ապրող և ստեղծագործող գրողների հետ: Եկել էին Բագրատ Ուլուբաբյանը, Աբգար Դանիելյանը և Գերասիմ Հովսեփյանը: Ուլուբաբյանի առաջարկով առաջին կուրսի ուսանող Վազգեն Օվյանը դահլիճից բեմ բարձրացավ և տեղ գրավեց հյուրերի շարքում. նա արդեն բանաստեղծի համբավ ուներ:

- Տղե՛րք, ասում են ընկեր Աբրահամյանը գիրք է գրում դպրոցական կյանքի մասին: Շատ հետաքրքիր կլինի,- լուրն այս հաղորդում էին իրար ուսանող տղաները:

Եվ 1954թ. աշնան մեկ երեկո (ես արդեն ավարտել և աշխատում էի Մարտունու «Դեպի կոմունիզմ» շրջանային թերթի խմբագրությունում) գրողների բաժանմունքում քննարկվում էր Սարգիս Աբրահամյանի ձեռագիր վեպը: Ամենքը հիացական կարծիք էին հայտնում: Ասուլիսն արձանագրողը ես էի: 1957թ. զինվորական պարտադիր ծառայությունս ավարտած, տուն էի վերադարձել: Ընթերցողի սեղանին էր Ս. Աբրահամյանի «Սերունդների հետ» գրքի առաջին հատորը:

Հիշում եմ, թե Լևոն Բաղդասարյանը որպիսի հիացմունքով էր խոսում Ստալինի «Մարքսիզմը և ազգային հարցը» գրքի մասին՝ այն դասելով Մարքսի «Կապիտալ», Էնգելսի «Անտի Դյուրինգ» և այլ ստեղծագործությունների շարքը:

Այդ մենք հետո պիտի իմանայինք, որ այդ «հանճարեղ չարագործի» (Զորի Բալայանի բառերն են) ձեռամբ Արցախը հայտնվեց Ադրբեջանի կազմում: Այո, հետո պիտի իմանայինք, որ Ստալինը, Բերիան և Բաղիրովը մի հրեշավոր ծրագիր ունեին՝ դեպի Ալթայի երկրամաս արտագաղթի և այլ ստոր միջոցների կիրառմամբ Հայաստանի բնակչությունը պակասեցնել մեկ միլիոնից, որ ըստ «սահմանադրության», անհնարին դառնա նրա՝ միութենական հանրապետություն մնալը և անհրաժեշտություն դառնա երկու հարևան հանրապետությունների միջև բաժանելը: Այդ պիտի իրականանար 1953թ. ամռանը: Փառք երկնավորին, որ «Ժողովուրդների հայրը» 1953թ. մարտ ամսին կնքեց իր մահկանացուն: Այդ մասին պարզ դարձավ Մ. Բաղիրովի դատավարության ժամանակ ԽՍՀՄ գլխավոր դատախազ Ռուդենկոյի համառ հարցապնդմամբ (տե՛ս Բագրատ Ուլուբաբյանի «Արցախյան գոյապայքարի տարեգրություն» ստվարածավալ աշխատությունը):

Ստեփանակերտի երկամյա ուսուցչական ինստիտուտը որակյալ կադրերի պատրաստման իսկական դարբնոց էր: Իսկ դա Ադրբեջանի սրտով չէր, ինչպես և հակառակ՝ նրա ստոր նկրտումների:

1953թ. Ադրբեջանը փակեց Ստեփանակերտի ուսուցչական ինստիտուտի դռները: Որ տարիներ, տասնամյակներ հետո քառամյա մանկավարժական ինստիտուտ բացի՝ միայն ու միայն թուրքական տարրը Արցախ լցնելու նպատակով:

Բայց խոփը քարին առավ:

Ոսկորը այս անգամ կոկորդում մնաց:

Ստեփանակերտի ուսուցչական ինստիտուտի դասախոսներ Սուրեն Հայրապետյանը, Արամ Մարտիրոսյանը, Սարգիս Արամյանը, Սարգիս Սարգսյանը, Սարգիս Աբրահամյանը շարունակեցին աշխատել Ստեփանակերտի դպրոցներում և հետագայում ճանաչվեցին 20-րդ դարի լավագույն մանկավարժներ: Այդ կոչմանն արժանացան ինստիտուտի մի քանի տասնյակ շրջանավարտներ (այդ մասին տե՛ս Բահատուր Դավթյան, «20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժները», ք. Ստեփանակերտ, 2001):

Ոմանք էլ դարձան գիտությունների թեկնածուներ, դոկտորներ, շատերը շարքային ուսուցիչներ մնացին՝ բոլորն ամենուր բարձր պահելով Ստեփանակերտի երկամյա ուսուցչական ինստիտուտի հարգն ու պատիվը: Ինքս անձամբ հաճույքով եմ կրում այդ անունը և երանությամբ հիշում այնտեղ ուսանելու երանելի տարիները:

* * *

1961 թվականի ամռանն էր: Հայկական պետական հեռակա մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետում հանդիպում էր կազմակերպված բանաստեղծ Հովհաննես Շիրազի հետ: Հայոց լեզվի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Խաչատուր Կանայանը հանդիսությունը բացում ու բանախոսելու իրավունքն արտոնում է գրականագետ Անուշավան Զաքարյանին: Ապա ելույթ են ունենում ուսանողները, արտասանում գրողի սիրված ստեղծագործություններից:

Վերջում հարցեր են ուղղում բանաստեղծին:

- Որքան ինձ հայտնի է, Դուք Ղարաբաղում չեք եղել: Այնտեղ սպասում են Ձեզ, ե՞րբ կարող եք այցելել Ղարաբաղ և հանդիպել Ձեր երկրպագուների հետ:

Հարցնողը ուսանող ընկերս էր՝ Ստեփանակերտի հ. 2 դպրոցի ուսուցիչ Բորիս Բաղրյանը:

- Ես Ղարաբաղ կգամ մի պայմանով, որ Ղարաբաղն էլ ինձ հետ գա Երևան,- ասում է բանաստեղծը:

Նորայր ԱՎԵՏԻՍՅԱՆ
Ստեփանակերտի ուսուցչական երկամյա ինստիտուտի 1952-53 ուստարվա շրջանավարտ, 20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժ

ԼՈՒՍԱՐԱՐ
Խմբագիր՝
ՍՎԵՏԼԱՆԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հիմնադիր՝
«Լուսարար» ՓԲԸ

✉ Ստեփանակերտ,
Հ. Թումանյան փ. 111, ☎ 94-38-99,
E-mail: gorctert@mail.ru: *www.lusarar.info*

Մեջբերումների եւ փաստական տվյալների ստուգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում:

Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլյուս» ՍՊԸ-ում: Տպաքանակ՝ 3171: Ծավալը՝ տպագրական 2 մամուլ:
Ստորագրված է տպագրության՝ 25.06.2013թ.:

«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ: